

Ղ. ԱՅՎԱԶՅԱՆ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԸ ԵՎ ՊԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաճաճատիպ Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների Ակադեմիայի
1949 թ. № 5 Տեղեկագրից

891.71(09)[Pnc4p6] 27565

၆-၅၅ ၆၂၄၁၄၄၈, ၇,

Ա. Ա. Թաշիրը և նրա օրհանգիստը:

Ղ. Այվազյան

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի նղբայրական կապը ռուս մեծ ժողովրդի և նրա բազմա-
դարյան կուլտուրայի հետ եղել է հայ կուլտուրայի ու արվեստի հարստաց-
ման աղբյուր, Համաշխարհային նշանակություն ունեցող ռուս գրականու-
թյան բարերար ազդեցությունը կրել են բոլոր ականավոր հայ դրողները։
Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ լուսավորիչ Խաչատուր
Աբովյանը, դեռ պատանեկության շրջանից, հաղորդակից լինելով ռուս ժողո-
վրդի մեծ կուլտուրային՝ իր ամբողջ կյանքում մնաց նրա ջերմ ջատագովը
և նրա համար մարտնչողը։

«Լեզուն ռուսաց է մինն լընդարձակագոյն և ամենահարկաւոր լնդուաց ի
վերայ երկրի».— ասել է Խ. Աբովյանը, ելլ ապա. «Աշխատենք... ձեռք բերել
ռուս լեզվի գիտություն և բարի քաղաքացիներ լինել։ Սրանով, հենց միայն
սլոանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ աղջի
հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և
անձնվիրություն...»։

Հայ գրականությունը Խաչատուր Աբովյանին է սյուրտական Խեմնիցներից,
Դմիտրիից, Կարամզևիից, Ժոկովսկուց և Կոխովից արած առաջին թարգմա-
նությունների համար։

Խ. Աբովյանի նշած ուղիով ընթացան 19-րդ դարի հայ գրականության
բոլոր լավագույն ներկայացուցիչները։ Ռեոլուցիոն դեմոկրատ Մ. Նալբան-
դյանը, հայ նոր գրականության մեծ կլասիկներ Հ. Հովհաննիսյանը, Հ. Ռու-
մանյանը, Ա. Իսահակյանը, ռեալիստ վրպասան Շիրվանզադեն և մյուսնե-
րը ընկալել են ռուս կուլտուրան իբրև իրենց հարազատը, սովորել են ռուս
գրականության տիտանների ստեղծագործությամբ, հանդես են եկել որպես
նրա պրոպագանդիստ ու թարգմանիչ։

Ռուս գրականությունը, որ իր բուն ծաղկումով, գաղափարների և գե-
ղարվեստական բարձր ձևերի հարստությամբ զարմացրեց աշխարհը և հա-
մաշխարհային ճանաչում նվաճեց, մեկն էր այն գլխավոր ու զրական լսման-
ներից, որոնք աղղեցին հայ գրականության ծաղկման վրա, ներգործեցին
ամբողջ 19 և 20-րդ դարերի հայ գրականության պատմության վրա։

Համարձակորեն կարելի է ասել, որ այն ամբողջ արժեքավորը, բարձր-
արվեստը, դեմոկրատականը և ռեոլուցիոնը, որ ստեղծել է հայ նոր և նո-
րագույն գրականությունը, ոչ միայն կապված է հայ հասարակական առա-
ջագիմական շարժման ու մտքի հետ, այլև ստեղծված է ռուս մեծ գրականու-
թյան հզոր ազդեցության տակ։

Ժողովուրդների այս նղբայրական կապը, ռուսական կուլտուրայի նկատ-
մամբ տածված սերը չէին կարող սպանել կամ թուլացնել ռուսական սատ-
րպանները, որոնք ջանում էին ռուս գրականության դարձնել ռուսացման
զենք։ Հայ ժողովուրդը շատ լավ էր տեսնում ռուսական ինքնակալության և

ռուս ժողովրդի տարբերությունը, ռուսական դեմոկրատական մեծ կուլտուրայի և Պուշկինյան ռուս Ստրուվենների ռեակցիոն կուլտուրայի տարբերությունը: Ի հակադրություն ինքնակալության՝ ռուսական դեմոկրատական առաջիկայական կուլտուրան ու գրականությունը լուսավորչական և ռեուլուցիոն հեղափոխական դեր կատարեցին հայ ժողովրդի կյանքում: Ռուս գրականությունը ժողովրդի սրտում արծաթեծում էր լուսավոր հույսեր, ազատության ճրագում և ասելություն՝ հարստահարողների նկատմամբ: Նա ինքնակալության դեմ ուղղված պայքարի սիմվոլ էր, երջանկության ու լույսի կոչ: Այն ինչու հայ ժողովրդի բոլոր առաջավոր, լավագույն գործիչները բարձր էին դնահատում ու անձնություններ սիրում ռուս մեծ գրականությունը, հանդես էին գալիս որպես նրա ջատագույններ և այն ժողովրդական զանգվածների մեջ տանողներ:

Ռուս գրականությունը հասարակական տարբեր խմբերի պայքարում գործածվող հզոր գեղեցիկ մեկն էր և իր արտացոլումն էր գտնում թարգմանական երկերի ընտրության և ռուս գրողների ստեղծագործության քննադատական գնահատականի մեջ: Հայ և՛ ռեակցիոն, և՛ ռեուլուցիոն շրջանները դիմում էին ռուս գրականությանը՝ օգտագործելով այն իրենց պայքարում, թեև հայ ժողովրդին ռուս գրականությանը հաղորդակից տանելու գործում վճռական դերը խաղում էին առաջադիմական, ռեուլուցիոն շրջանները, որոնք խոր ու ճիշտ էին հասկանում ռուս գրականության նշանակությունը հայ ժողովրդի համար. հեղինակներն ու երկերն ընտրելու, դրանք դարձրելու աշխարհաբար թարգմանելու, գրական ժառանգությունն օգտագործելու և նրա սոցիոլոգիական բնույթի մեջ արտահայտվում է ռուս գրականության, շուրջը մղվող այդ պայքարը հայ իրականության մեջ:

Սակայն այդ ամենով հանդերձ, ռուս գրականությունն այնուամենայնիվ մնում էր սակավաթիվ մարդկանց մատչելի: Ինքնակալությունն ամեն տեսակ խոչընդոտներ էր հարուցում, որպեսզի Պուշկինի համբավը չտարածվի ամբողջ մեծ Ռուսիայով, որպեսզի գեղջուկը Բելինսկու ու Գոգոլի գործերը չտեսնի:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի մրրիկը հղմացրեց արեց այդ խոչընդոտները և նրանց, ովքեր ջանում էին ռուս մեծ կուլտուրայի ու ժողովրդի միջև ալոպիսի խուփեր առաջացնել: Հոկտեմբերն ազատագրեց և հայ ժողովրդին, Հոկտեմբերը ինքնակալության շղթաներից ազատեց ռուս մեծ գրականությունը և այն դարձրեց մարդկության կուլտուրայի հիմնական գործի՝ աշխատավոր մարդու սեփականությունը:

Սոցիալիզմի երկրի ժողովուրդների եղբայրական անստան ընտանիքում առաջին անգամ ամբողջ հզորությամբ ծավալվեց ռուսական կուսակալ սովետական գրականության արդյունավետ ներգործությունը՝ ՍՍՌՄ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի գրականության վրա:

Որակապես այլ բնույթ ընդունեց ռուս գրականության ազդեցությունը հայ գրականության վրա Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայից հետո: Չկա ոչ մի սովետահայ գրող, որը դաստիարակված չլինի ռուսական սովետական գրականության վճռական ազդեցությամբ իր ստեղծագործության վրա: Եվ եթե անցյալում ռուս գրականության երկերը համարյա ինչքան հասնում էին նրանք իրարժեքում կորած հայ գյուղացու խավարշտին խրճիթները, ա-

պա ուսա գրականության երկերը այժմ դարձել են հայ կոլիտոլնիկների ու բանվորների լենինյան լույսով ողողված ընդարձակ սեղանի զարդը:

Ռուս և հայ ժողովուրդների բարեկամության ու եղբայրական սիրո, հայ գրականության դարդացման մեջ ուսա գրականության ունեցած հսկայական նշանակության տալացույցն այն է, որ 13-րդ դարից սկսած, երբ առաջին անգամ հայ գրականության մեջ երևաց ուսա հնագույն գրականության թարգմանական մի երկը, մինչև Հայրենական Մեծ պատերազմը, ուսա գրականությունից և նրա մասին եղած քննադատական հողվածներից հայերեն է թարգմանված ավելի քան 6000 գործ, ավելի քան 170 զանազան պարբերականներ լույս են բնծալել ուսա գրականության գործերի թարգմանություններ, քննադատական հողվածներ ու գրախոսականներ նրա մասին: Հայ կուլտուրայի ու գրականության ավելի քան 1000 գործչի անուն կապված է ուսա մեծ գրականության թարգմանության, գնահատության, տարածման աղնիվ գործի հետ»:¹

Դա հայ համարակալան մտքի, հայ գրականության զարգացման գործում ուսա գրականության ունեցած նշանակության անվիճելի ապացույցն է, որովհետև հայ հասարակալան գործիչների համար ուսա գրականության մասին գրելը նշանակում էր արձագանքել այժմեակալանության հրատապ հարցերին, պայքար մղել համաշխարհային նշանակություն ունեցող ուսա գրականությունը ժողովրդի մեջ տարածելու համար:

Հայ ժողովուրդը երբեք չէր մոռանում և չի մոռանա, որ Ռուսաստանի շնորհիվ նա աղետակեց պարսկա-տաճկական բարբարոսական լծից: Հայ ժողովրդի մեծ զավակ Խ. Աբովյանը շատ լավ է արտահայտել մեր ժողովրդի հույսերը՝ իր նշանավոր «Վերք Հայաստանի» վեպը ավարտելով մի սիմվոլիկ պատկերով, երբ Ջանգուն՝ հայ ժողովրդի մարմնացումը, հարազատ քույր Վուլգային՝ ուսա ժողովրդին հղում է սիրո սրտառուչ խոսքեր, Կասպից ծովի ալիքներում բարեկամաբար գրկախառնվելով նրան:

«... Զախշախեցի՝ թող գազանն նկուն, Ռուսեա հզօր բազուկ եղիցի ձեզ նիդն, նմա՝ զոհ լինիլ լիցի ձեր միշտ ճիգն: Վօլգայ իմ մեծ քեռ, Լա, իմ քույր Երասխա՝ համբոյր մատուցուք ի Կասպեան կոհակ:

Բացե՛ք զձուկատ ձեր, ցնծացե՛ք համայր. իմ բաղջը Վօլգայ քոյր հոգայ միշտ զձեզ ձար ... Այս կապն անխզուն, այս սէր սրբազան մնասցե՛ ի մէջ մեր ի կեանս յախտեան...»:

Հայ ժողովուրդն առհալվեա իր սրտում քանդակագրել է ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինի խոսքը, որ՝ «Միայն սովետական իշխանության դադարաւարտ խաղաղություն և ազգային վերածնության հնարավորություն բերեց հայ ժողովրդին», փրկեց նրան ֆիզիկական բռնաշնչումից: Ռուս ժողովրդի մեծ օղնությունը հնարավորություն տվեց հայ ժողովրդին՝ կառուցելու Սովետական, Սոցիալիստական, ազատ ու անկախ ռեսպուբլիկա, աննախընթաց չափերով ապահովեց հայ ժողովրդի ձեռով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի բարգաւաճումը:

Ահա ինչու հարյուրամյակների ընթացքում ուսա մեծ ժողովրդի գրակա-

¹ Տեղեկությունները բաղված են գովտ.-պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատությանը» գիտերտացիոն աշխատությունից:

նությունը այնքան հարազատ ու սիրելի է եղել հայ ժողովրդին, իսկ նրանից կատարված թարգմանությունները, նրա մասին զնահատականներ գրելը դարձել է հայ կուլտուրայի գործիչների հարազատ գործը, նրա բարերար ակզեցությունը հղել է հայ գրականության զարգացման հատկանիշը:

Եվ ուստի գրականության բոլոր տիտանների շարքում, որոնք անգնահատելի դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում, որոնց հայ գրականությունը մատուցել է սրանշացման իր առհավատչյան, որոնց երկերը սխտեմատիկաբար թարգմանել է հայերեն և որոնց բարերար ազդեցությունն զգացել են հայ գրողները,— Խաչին տեղերից մեկը պատկանում է ուստի նոր գրականության մեծագույն հանճարին, նրա հիմնադիր ու բտեղծող Պուշկինին:

*

Ալեքսանդր Պուշկինի երկերից կատարված հայերեն թարգմանություններն ավելի քան մեկ դարու տրագիցիա ունեն: Մեծ բանաստեղծի գործերից հայերեն թարգմանել են ղեռ նրա կենդանության օրոք, երբ անցած դարի 30-ական թվականներին հայտնի գիտնական, հայկաբան Մկրտիչ Էմինը, տակավին Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանող եղած ժամանակ, թարգմանեց Պուշկինի գործերից մի քանիսը, այդ թվում «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին»:

1833—38 թվերին Մոսկվայում ռուսերեն լույս տեսավ «Հայ ժողովրդի պատմության տեսությանը վերաբերող ակտերի ժողովածո» և հատորակը, որի երրորդ հատորում ասված է.

«Մկրտիչ Էմին, Արևելյան լեզուների Մոսկվայի Լազարյան հայ ճեմարանի սան, ուղարկված այդ ճեմարանը Կալիթայից՝ Հնդկաստանից, ռուսերենից հայերեն չափածո թարգմանել է Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասյան գերին» երկերը: Այս թարգմանությունները շուտով լույս կտան: և այն ժամանակ Շատրվանի և Գերայի երգիչը հայտնի կդառնա հայերով բնակված Ասիայի զանազան երկրներում» (էջ 220):

Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո Մ. Էմինը սովորել է Մոսկվայի համալսարանում, այնտեղ լսել է Շավիրեվի դասախոսությունները, որի քննադատական հոգովածները Պուշկինը դրական է քննահատել, լսել է համալսարանի գրականության պրոֆեսոր, Պուշկինի երկերի առաջին քննադատ Նադեժդինին: Այս ամենն անկասկած նպաստել է, որ Էմինը հետաքրքրություն տածի դեպի ուստի գրականությունը և մասնավորապես Պուշկինի ստեղծագործությունը:

Չափազանց հետաքրքրական է այն բերանացի ավանդությունը, որ զրի Լ. ունի արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լեոնյանը Լազարյան ճեմարանի ուսանողներից՝ 1830 թվականներին Պուշկինի և Ժուկովսկու կողմից Լազարյան ճեմարանն այցելելու մասին: Մ. Էմինի թարգմանությունների մասին կան և ուրիշ վկայություններ. օրինակ՝ Ռ. Պատկանյանը, որ 1843—49 թվերին ուսանել է Մ. Էմինի մոտ, իր հուշերի մեջ ասում է, որ Պուշկինի և Լեոնյանի երկերը առաջին անգամ իրեն ծանոթացրեց Մ. Էմինը, որը «Շատ անգամ հենց յուր դասի միջոցին ձեռքն առնում էր նոցա շարադրությունները և կարդում էր մեղ համար և այդ կերպ մեր մեջ սեր ու ճաշակ էր պցում ալդ և ուստի ուրիշ հեղինակների մասին»:

Վերջապես Ս. Էմինն ինքն էլ ասում է, որ Լազարյան ճեմարանում հայերենի դասերի ժամանակ թարգմանում էի ժուլովսկու «Ունդինան» և Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Արզրում»-ը:

Իսկ Էմինի թարգմանությունների տպագրվելու մասին մեզ ոչինչ հայտնի չէ, այնուամենայնիվ ռուս գրականության, Պուշկինի ստեղծագործության նկատմամբ ունեցած նրա հետաքրքրությունը հանդեպ այն բանին, որ 1843 թվին լույս տեսավ Լազարյան ճեմարանի ուսանող Հ. Համաղասպյանի կազմած ռուս պոետների բանաստեղծությունների մի ժողովածու, որի վերնագիրն է «Թարգմանությունք արձակ և ոտանադոսիս ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի ժուլովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկիոյ և Գնեդիզէ. Յ. Համաղասպանց, Արդեամբք և ծախար ազնուականի վրաց՝ Մկրտչի Մուրաշեանց: Ի Մոսկով. ի տպագրատան ճեմարանի տնայրց Լազարեանց. 1843»:

Ժողովածուն պարունակում է ռուս բանաստեղծների զործերից բաժան թարգմանություն. դրանց մեջ են նաև Պուշկինի «Հետևյալ տաս բանաստեղծությունները. «Ռուսալկա», «Ծով և ցամաք», «Մի տար ինձ, տեր, խեղագորի», «Եւ խոնջեալն ուղեւոր արտիջեր զաստուծոյ», «Ի հին ատուրս, տէր զօրութեան», «Մարգարէ, «Երգ թաղման», «Սոխակ», «Վեմպ», «Մուկլաս»:

Այն օրերին, երբ դեռ կենդանի էին ռուս գրականության պայծառ հանճարներին՝ Պուշկինին և Լերմոնտովին սպանողները, Համաղասպյանի այդ ժողովածուի լույս տեսնելն ինքնին մեծ իրադարձություն էր և յուրօրինակ մի ցույց, հայ ժողովրդի ջերմ սիրտ և համակրանքի արտահայտությունը ռուս ժողովրդին՝ նրա կսկիծի օրերին: Անկախ այն շանից, թե Համաղասպյանը հասկացել է, թե ոչ իր գրքի քաղաքական նշանակությունը, այնուամենայնիվ այդ նշանակությունը ձեռք է բերվել թարգմանելու համար, քնտրելով այնպիսի երկեր, որտեղ խոսվում է բանաստեղծի հասարակական կյանքում ունեցած դերի մասին, նրա ծանր բախտի մասին՝ իր հայրենի երկրում և նրա հակառակույ մութ ուժերի մասին:

Պուշկինի երկերից կատարված թարգմանությունների այս առաջին ժողովածուի նշանակությունն այն է, որ այդ ժամանակից սկսած, բանաստեղծի ստեղծագործությունը հայտնի դարձավ հայ ընթերցողին: Թարգմանությունները, որ բավական մոտիկ են բնագրին (զրրում հայերեն թարգմանության դուգաճու տրված են նաև ռուսերեն տեքստերը), գրաբար են: Զգուշվում է, որ թարգմանիչը ձգտել է պահել Պուշկինյան բանաստեղծությունների ոճի մը, բայց հնարավորին ճիշտ վերարտադրել պուշկինյան պատկերները. բայց որում ռուս նոր գրական լեզվի հիմնադրին հին հայերենով վերարտադրելու աղյ փորձը բավարար արդյունք չի տվել. թարգմանությունը գեղարվեստորեն թերարժեք է և իր լեզվով քիչ է մատչելի հայ ընթերցողին:

Գրաբար է նաև բոլոր ժամանակի երկրորդ թարգմանությունը՝ հատվածներ «Ինչուներ» պոեմից Ռ. Պատկանյանի ձեռքով»¹:

Պուշկինի երկերը հայերեն թարգմանելիս արտահայտվել է միևնույն պայքարը, որը մղվում էր ամբողջ հայ գրականության մեջ — ժողովրդին անհասկանալի դրաբար լեզվի կողմնադիրների՝ սեռակցիոներների և աշխարհաբարի համար մարտնչողների՝ դեմոկրատների միջև: Հազի՛ք հայ գրականության առաջադիմական, դեմոկրատական հոսանքը, որ սկիզբ էր առնում հայ

նոր գրականության և հայ նոր գրական լեզվի հիմնադիր Խաչատուր Աբովյանից: Այս հաղթանակին էլ մեծ ծառայություն ունի մատուցած 50—60-ական թվականների ռուս առաջավոր գրականությունը, որի ուժեղ ազդեցության տակ զարգացավ Դեղինի և Չերնիշևսկու գինակցի՝ սեռուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի և ընդհանրապես «Հյուսիսափայլ» ամսագրի բանաստեղծները ստեղծագործությունը:

Հետևաբար Պուշկինի նկատմամբ տածված հետաքրքրությունը, նրա դործերից կատարված թարգմանությունների աճուրդը, որ նկատվում է 50—60-ական թվականների հայ գրականության մեջ, միանգամայն օրինաչափ է և կապված է հայ առաջավոր գրողների ձգտման հետ՝ մեծ բանաստեղծի ստեղծագործությունը դարձնել զենք ռուս և հայ ժողովուրդների՝ ինքնակալության դեմ մղած համատեղ պայքարում:

Այստեղից էլ բխում է սեռուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի հետաքրքրությունը Պուշկինի պոեզիայի նկատմամբ: Մոտավորապես 1850—1854 թվերին, Նալբանդյանը մի հատված թարգմանեց «Կովկասի գերին» պոեմից՝ «Չերքեզի երգը» և գրեց «Բանաստեղծ» ոտանավորը, որն ունի Պուշկինի համանուն գործի շունչը: Բայց եթե Պուշկինի մոտ բանաստեղծի ցնցված հոգին կարոտում է աշխարհի զվարճություններին ու խույս տալիս աշխարհի տականքներից, ապա Նալբանդյանը բանաստեղծին կոչ է անում՝ ազմագաղտ խնկրու և կովկոս հանուն ճշմարտության՝ դրա՝ մեջ տեսնելով նրա կոշտը:

«Հյուսիսափայլը», որի գլխավոր աշխատակիցներից մեկն էր Մ. Նալբանդյանը, 1863 թվին տպագրում է Լերմոնտովի «Բե» պոեմի թարգմանությունը և այդ առթիվ մի խիստ հատկանշական դիտողություն է անում, որ ամսագրի էական թերությունը ռուս գրողների թարգմանություններ և ռուս գրականության վերաբերող քննադատական հոդվածներ ու բավականաչափ քանակությամբ զետեղելն է. խմբագրությունը, տպված է աչքտեղ, հույս ունի ժամանակի ընթացքում լրացնել այդ թերությունը, ինչքան որ դա հնարավոր լիսի «Հյուսիսափայլը» համար: Հենց այդ ծանոթության մեջ էլ ամսագիրը Լերմոնտովին անվանում է Ալեքսանդր Պուշկինին հավասարաբեկ ժառանգ և մանավանդ գինակից, բնոհանրություն տեսնելով ոչ միայն նրա բանաստեղծական ստեղծագործության, այլև անհատական ճակատագրի մեջ: Ինչպես որ Պուշկինն իր «Նեմեզինի Օնեգին» պոեմում մարգարեաբար կանխատեսել էր իր մահը, ալիքայնում է ամսագիրը, այնպես էլ Լերմոնտովը կանխատեսել էր դա «Մեր ժամանակի հերոսը» վեպում: Լերմոնտովը մեռավ Կովկասում, երբ հազիվ էր լրացել 27 տարին, արագված՝ Պուշկինի մահվան առթիվ գրված զայրալից բանաստեղծության համար:

«Հյուսիսափայլ»-ի 1860 թվի № 6-ում տպագրվեցին Պուշկինի երկու բանաստեղծությունը Գ. Բարխուդարյանի ազատ թարգմանությամբ, իսկ 1864 թվի № 6-ում Սմբատ Շահազիզի «Պոեմ» ոտանավորը Պուշկինի համանուն բանաստեղծության նմանությամբ:

Սակայն «Հյուսիսափայլը» չէր կարող կատարել իր խոստումը, իրենից անկախ պատճառներով. վրա հասած սեպտեմբերի հետևանքը եղավ այն, որ շատ շանցած փակվեց ամսագիրը:

Տմբատ Շահազիզը, որ «Հյուսիսափայլ»-ում տպագրել էր Պուշկինի նմանողությամբ գրած իր բանաստեղծությունը, մեկն էր այն հայ պոետներից, որոնց ստեղծագործությունը զարգացել էր ռուս մեծ գրականության,

Պուշկինի և Լերմոնտովի հոսր պոեզիայի ազդեցության ներքո, որի մասին ինքը՝ Շահապիրը այսպես է գրել.

«Քուտ ռանաստեղծներից ինձ վրա ամենից ավելի ուժեղ տպավորություն են թողել, իհարկե, Պուշկինը և Լերմոնտովը: Պուշկինով ես միշտ տարված եմ եղել, ամենից առաջ որպես բաղձակողմանի և ճշմարիտ արվեստագետ-բանաստեղծով, որի ստեղծագործությունը դրախտային զեղեցիկությամբ փառատակող սրանչևի ծաղկած մի պարտեզ է նրբազգաց ընթերցողի համար... Տեսեր թե ինչպես է նա նկարագրում բաղձազան բնությունը, ինչպես է նա կարողանում երգել սերը, որքա՜ն նազանք ու դուշների ճոխություն կա նրա լավագույն գրվածքներում...»

Նրա պոեզիայի, մասնավորապես «եմպենի Օնեգինի» (որոշ չափով նույնիսկ «Գրաֆ Նուլինի») ազդեցության հետքերը տեղ-տեղ նկատելի են իմ «Լևոնի վշտի» մեջ: Անկախ դրանից, ինչ որ ժամանակ ես հաջցել և սկսել եմ գրել նոր մի պոեմ հայ նոր կյանքից, որը կլինի մասամբ նմանություն «Եմպենի Օնեգինին», հատկապես պոեմի ռոմանտիկական հանդույսին— Տառլանայի պատմությունը: Դրանից առաջ իմ «Աղատություն ժամերի» մեջ ես արդեն փորձել եմ, ինչպես կարող էի, նմանվել Պուշկինին. Թարգմանել եմ նրա «Кудок янтарный» բանաստեղծությունը, մի քանի զեպրերում առանձին առգերը գարձրել եմ Լարիդարֆներ սեփական այն գործերիս, որոնք գրված են նրա ազդեցությամբ»¹

Ս. Շահապիրի խոստովանությունը չափազանց հետաքրքրական է և այն պատճառով, որ ինչպես այդ մասին խոսում է նա Յու. Վեսեևովսկուն, գրած իր պատասխանում «այդպիսի ազդեցությունն ինձ թվում է բոլորովին բնական և անխուսափելի փաստ, որովհետեւ այն ռմբոզը իրոք տաղանդավոր, ուժեղն ու ինքնատիպը, որ ստեղծում է մի ժողովուրդ, չի կարող իհարկե արձագանք չգտնել մի ուրիշ ժողովուրդի մեջ, որն ապրում է մշտական և սերտորեն նրա հետ շփվելով»²:

Ի հակադրություն հենց նույն Յու. Վեսեևովսկուն, որը կանգնած էր պատմա-համեմատական դպրոցի դիրքերի վրա և ազդեցության հարցերը դիտում էր սյուժեների, կերպարների, ձևի և այլն փոխանակության պլանով, Ս. Շահապիրը ձիշտ է ընդգծում ռուս գրականության և Պուշկինի պոեզիայի ներգործության բնույթն իր ստեղծագործության և հայ գրականության վրա շեշտելով, որ այդ բնական ու անխուսափելի ազդեցության հիմքում գրված է մշտական սերտ շփման մեջ ապրող երկու ժողովուրդների պատմական կյանքի բնդհանրությունը: Հայ բանաստեղծն այդ ազդեցության մեջ առանձնացնում է ու թե սյուժեների և այլն փոխանակությունը, այլ այն արձագանքը, որ հայ գրականության մեջ ունենում է ռուս գրականության ստեղծած ռմբոզը ճշմարտապես տաղանդավոր:

Ս. Շահապիրը կարողացել է հասկանալ Պուշկինի պոեզիայի զեղարվեստական արժանիքները, նրա տաղանդի լայնությունն ու բաղձազանությունը, ձևի բարձր արվեստը և հայ գրողներից առաջինը լինելով՝ դիմել է այնպիսի երկերի. ինչպիսիք են «Եմպենի Օնեգինը» և «Կոմս Նուլինը»: Սակայն ռոման-

¹ Ю. Веселовский, Русское влияние в творч. армянской литературе. М. 1909, стр. 12-13.

² Նույն տեղում, էջ 45:

տիկ Ս. Շահազիզը ստեղծագործության մեջ չկարողացավ հասնել Պուշկինի պոեզիայի ռևալիյուտական սկզբունքներին: Դա արտահայտվեց եվգենի Սնեկինի և Շահազիզի «Լեոնի վիշտը» պոեմի հերոս Լեոնի կերպարների տարբերության մեջ և այն բոլոր դեպքերում, երբ Շահազիզը դիմում էր Պուշկինի պոեզիային: Սրինակ՝ իր «Աղատության ժամերի» երկրորդ հատորում Շահազիզը զետեղել է Պուշկինի «Հակինթի գավաթը» բանաստեղծության թարգմանությունն ու մտքերը է հետևյալ տողերը.

Ոսկե բաժակներ
Ուրախալի,
Լսենք ի նրվեր
Մեր հայ առգի:

Կնքեն ն՝ երգեցն՝ր,
Հաւ աղջիկներն,
Կնքեն ն, հնչեցն է,
Հայ զավակներն:

Պուշկինի երկերի այսպիսի «վերաիմաստավորումը», որը հատուկ է Ս. Շահազիզի և՛ մյուս թարգմանություններին, հանգում էր իհարկե իսկական Պուշկինի աղավաղմանը, սակայն մյուս կողմից հետաքրքրական է մեծ բանաստեղծի ստեղծագործությունը աղղային խնդիրների լուծման մեջ առնչու փաստը:

Հայ պոեզիայում ռուս գրողին ձոնված առաջին բանաստեղծության պատիվը պատկանում է Ս. Շահազիզին: Այդ ռուս գրողը Պուշկինն է: Պուշկինի հանճարի ճանաչումը և նրա նկատմամբ առժամ սերը հայ բանաստեղծն արտահայտել է հետևյալ քառյակում.

Իմ սրտի սիրած դու պոետ անդին,
Որ գյուղիկ ես ինձ տիրո քնարով,
Պատել ես հոգիս ոսկե քնարով,
Կնքեն՝ս հավիտյան, կնքեն՝ս դու, Պուշկին՝:

Ոչ միայն հայ ռեուլյուցիոն դեմոկրատները, ոչ միայն լիբերալները, այլև կղերական-ազգայնական գրականության ներկայացուցիչները զիմում էին Պուշկինի ստեղծագործության:

1858 թվի «Մեղու Հայաստանի» հանդեսում տպագրվեց Պուշկինի «Ոսկե ձկնիկ» հեքիաթի առաջին արձակ թարգմանությունը՝ Ձկնորսն ու ձկնիկը՝ վերնագրով, Հովհ. Բաղդասարյանի թարգմանությամբ: Այդ նույն հանդեսում, 1863 թվին տպագրվեց «Ոսկե ձկնիկի» երկրորդ թարգմանությունը, այս անգամ Խ. Տեր-Աղեքսանդրյանի ձեռքով արված և «Զրգնուրաի կրնիկը» վերնագրով, Թիֆլիսի հայերենով:

Թարգմանչի կամայականությունն արտահայտվել է ոչ միայն հեքիաթի վերնագիրը փոխելու մեջ, այլև այն բանում, որ թարգմանության մեջ մըտքը ված են բարոյախոսական դատողություններ, չար կանանց մասին՝ միջնադարյան եկեղեցական գրականության ողով:

Նույն «Մեղու Հայաստանի»-ի 1867 թ. № 43-ում տպագրվեց «Ժլատ ասպետի» շարադրությունը, իսկ նույն թվի № 15-ում «Պոետին» բանաստեղծությունը:

Բայց դրանից, 60-ական թվականներին Պուշկինի երկերի պարբերաբար թարգմանություններ հնարավորվում «Կոռնկ» ամսագրում («Արձագանք», «Թափառում եմ ես աղմկոտ փողոցներում»), Շոլհ. Տեր-Աբրահամյանի «Պատմություն Ղրիմի» դասագրքում (Թեոդոսիա, 1865), մի հատված «Բախ-չխարայի շատրվանը» պոեմից:

1850—60-ական թվականներն արդեն Չրինսկ ևն տալիս այն պայքարին, որը ծավալվել էր հայ մամուլում Պուշկինի շուրջը: Եթե Մ. Նալբանդյանը և մասամբ «Հյուսիսափայլը»-ը պայքարում էին Պուշկինի ռեալիստական երկերը ժողովրդականացնելու համար՝ առաջին պլանի վրա քաշելով բանասահլծի արդատեանը լիրիկան, սոցիալական հագեցած երկերը, ապա «Մեղու Հուլաստանի»-ի և «Կոռնկ»-ի նման ամսագրերը Պուշկինին հակադրում էին ժողովրդին, ապագրելով վերջինիս բոմանտիկական, միստիկական գործերը:

1870—80-ական թվականներից սկսում է ավելի ուժեղանալ Պուշկինի երկերի թարգմանությունը:

Հայաստանը Ռուսաստանին կցվելուց հետո անցած կես դարը ապահովել էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, դարգացրել նրա կուլտուրան: Ռուսաստանում լույս էին տեսնում հարյուրավոր հայերեն թերթեր, պարբերականներ, զանազան հրատարակություններ: Հայ ժողովուրդը ավելի սերտորեն էր կապվում ռուս մեծ ժողովրդին՝ մասնակցելով նրա ազգատարական պայքարին, գնալով ավելի ուժեղ կերպով էր արտահայտվում ռուս գրականության ու կուլտուրայի արդյունավետ ազդեցությունը: Եվ հատկապես այդ տարիներին սովորական Ռուբրիկան Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի օգնությամբ ձեռնամուխ էր լինում հայերի բարբարոսական բնաջնջմանը: Ամենայն հստակությամբ երևաց հայ ժողովրդի երկու հատվածների՝ Ռուսաստանում ապրող հատվածի և Ռուբրիկայի բնակավայրի մեջ հոգևորական հատվածի հակադրական տարբերությունը:

Հայ ժողովուրդը նորից իր հույսերը կապեց Ռուսաստանի հետ, նոր ուժով դարգացավ ռուսասիրությունը, ռուսական օրինետալիսան՝ բոլոր հայ առաջադիմական գործիչների մեջ: Սրա արդյունքներից մեկը եղավ այն, որ ուժեղացավ ռուս գրականության նկատմամբ անսահման հետաքրքրությունը, սիրտեմատիկ կերպով սկսեցին թարգմանել ռուս գրողների գործերը, քննադատական հոգեվածներ ապել ռուս գրականության մասին: Ռուս գրականության պրոպագանդը ոչ միայն կուլտուր-լուսավորչական, այլ և քաղաքական բնույթի ստացավ, որի հետևանքով Ռուբր բնակավայրերն սկսեցին հալածել արևմտահայ հասարակական և գրական գործիչներին:

Թարգմանվեցին Հայաստանի, Կովկասի հետ կապված ռուս գրական գործերը՝ Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Արզրում», Լեոնտովի «Փախստականը» և այլն: Պուշկինի, Ինչպես և մյուս ռուս գրողների մասին թերթերում և ամսագրերում լույս տեսան մի շարք հոգեվածներ: Առանձնահատուկ բնույթ ստացան Պուշկինի երկերի թարգմանությունները, որոնք վերաբերում էին Պուշկինի հայ իրականության, հայ ժողովրդի կյանքի հետ:

Դեռ 1874 թվին Հայկական աշխարհի ամսագրի № 1—2-ում տպագրվեց Հուշարձան բանաստեղծությունը Բաղրատունու թարգմանությամբ և նմանությունովումբ: Մեծ բանաստեղծը մարգարեաբար կանխատեսելով օգտագրվելի երջանկության աչգաբացը՝ մոռանալու սքանչելի ասպաղան, գոչում է.

Համբավն իմ Ուսխալում անմայրածիր
կտարածվի,
Ինձ կհիշի յուրարանչուր լեզու աշխակ
ապրող,
Սլավոնի թուր սեզ ու ֆինն ու դեռ այսօր
վայրի
Տունդուգը և կալմիկն ստեպ սիրող:

Իսկ Բաղրատունու նմանողություն մեջ, այս շտղերը հնչում են այսպես.

Իմ համբավնս կուե մայր իմ սուրբ
Հայաստան,
եվ հայկական լեզուներ իմ անունս կտան,
Երկուր չի դադարի հայկյան ազգ՝ ինձ սիրել,
Եր բարի զդաշնունը գիտնի զարթնցնել...

Պուշկինի գաղափարը թեև նսեմացված է և թարգմանելի կողմից ազգային նեղ շրջանակի մեջ է առնված, այնուամենայնիվ ուս մեծ պոետի բանաստեղծությունը մտցվել է հայ ժողովրդին ստրկացնողների դեմ մղվող պայքարի մեջ:

Պուշկինի Լսեղծագործությամբ սկսում են հետաքրքրվել և հայ ուսակցիոն Մխիթարյանները. «Բաղմավեպը» 1876 թվին տպում է «Թափառում եմ ես աշմկոտ փողոցներում» բանաստեղծությունը՝ զրաբար: Թարգմանության հետ զեատեղծ է կենսագրական մի փոքր ակնարկ Պուշկինի մասին, որը լի է բանաստեղծի գյանքին վերաբերող բաղմավիվ փաստական սխալ տեղեկություններով: Սակայն զրա հետ մեկտեղ արված է մի հետաքրքիր զիտոդուբուն Պուշկինի և ինքնակալության հարաբերությունների մասին. Պուշկինն ի դարձին ի Բեգերպուրի, ամբաստանվեցավ իբր թե հուկամետ ըլառաակալարության, անոր համար դեղ տեղ մը բաշվեցավ:

Հատկանշական է և հետևյալ փաստը. նույն «Բաղմավեպը» 1883 թվին հատվածներ 1 տպագրում ճանապարհորդություն գեպի Արգրում»-ից զրաբարախառն: Ընտրած են այն հատվածները, որոնք վերաբերում են Պուշկինի Թիֆլիսում անցկացրած շրջանին և Հայաստանի վրայով էրդրում կատարած ուղևորության նկարագրությանը: Այս թարգմանությունո, ինչպես 1887 թ. կոստանդնուպոլսի «Մասիս» ամսագրում լույս տեսած հոլվածը և ուս զրակաությունից կատարված ուրիշ շատ թարգմանություններն ու հոլվածներն ուներն վառ արտահայտված սոսախրական տենդենց և կապված էին 1870—75-ական լվականների բաղաբական իրադրության հետ:

Նյգ տարիններին ժողովրդին հասկանալի լեզվով Պուշկինից սկսում են թարգմանություններ անել զրիմյի հայերը: Լադարյան ճեմարանի նախկին ուսաող Ս Խորասանյանը Ջրիմի հայերենով թարգմանում է «Բորիս Գոդունովը», իսկ 1873 թվին Թեոդոսիայի Դաստիարակ ամսագրում լույս է տեսնում «Պաղչեսարալի աղբյուրը», բատ որում թարգմանության առթիվ հանդեսի խմբագրությունն անում է հետևյալ զիտոդուբությունը. «Մոռաց աշխարհաբարոզ և սոաջին գերաշոշակ քնարերգակ բանաստեղծ Ալեքսանդր Փուշքինին

անվանի գրվածքներին մեկն է «Бахчисарайский фонтан», որը թարգմանությունը կղեններ այստեղ ի վայելս մեր բանասիրացի»:

Այս թարգմանությունը շատ ավելի բարձր է Բագրատունու «Նմանություն»-ին: Սա ավելի ծուղ է բնագրին և արված է ուսուցողականությունը սիրող և ճանաչող մարդու ձեռքով: Պուշկինի պոեզիայի հարաձուռն տարածման տեսանկյունից ուշագրավ է «Քնար խոսնակ» բանաստեղծությունների ժողովածուն, որ լույս է տեսել 1881 թվին գավառական մի խոլ անկյունում՝ Շուշի քաղաքում: Իր սևփական գործերից բացի, հեղինակը՝ Նիկ. Տեր-Ավետիսյանը ժողովածուի մեջ ղեկավարել է Պուշկինից, Լերմոնտովից, Դոբրոլյուբովից, Մայկովից կատարած իր թարգմանությունները: Իրական իսկ հայերենով թարգմանված է Պուշկինի «Բանաստեղծք»: Ինքնուրույն բանաստեղծությունների թվում կա մեկը, որ ձոնված է Պուշկինին. դա մի զիջում է ուսուցման բանաստեղծին, նրա հուշարձանի բացասան առթիվ: Բանաստեղծությունը վերնագրված է «Պուշկինի արձան» և թվագրված է 1886, հունիսի 6, Մոսկվա: Առաջին տների մեջ հեղինակն առաջին է բնորոշում Պուշկինի պոեզիայի նշանակությունը.

Ահա ա լուրս բացավ
 Խորամանկ յուր աչքը.
 Եվ լույսի մեջ նա տեսավ
 Յուր քաջ պոփես, որ Երզնու

Ա... տոմսեր ջարդվեցան
 Նրա քնարի վեճ ձախից,
 Որոտացին և փախան
 Խավար օդեր նրա շնչից:

Ազատության արուսյակ
 Էր հայրենի աշխարհին,
 Կրթեց ամբոխն յուր համրակ
 Փրկող լուսին, զեղեցիկ

Հեղինակը բանաստեղծին չի հակադրում ժողովրդին ժողովուրդը գնահատել ու բերել է իր երգչին, սոցիալական ու խավարի դեմ անվեհեր կերպով մարտնչելին, որն իր պոեզիայի ուժով փարատում է խավարի ուժերը: Պուշկինը բնութագրված է որպես իր հայրենիքի ազատության արուսյակ, իր ժողովրդին լուսավորելու վեճ գործ կատարող: Եվ այժմ, ինչպես տված է նույն ձոնի մեջ, երբ նրա պոեզիան հայկահարկով բոլոր խոչընդոտները՝ հասել է ժողովրդին, խավար ուժերին «զոհ դարձած բանաստեղծին» արձան է կանգնեցվում.

Երբայց, ու վ հանձար,
 Ահեղազդ են խոսերդ,
 Աղնիվ գարձան սրտեր բարձ,
 Եվ ծագեցան քո փշերդ:

Կանգ չառնելով այդ տարիներին Պուշկինից կատարված մի շարք թարգմանությունների վրա՝ անհրաժեշտ է հատկապես նշել Պուշկինի պոեզիային պիտի 80-ական թվականների ականավոր քնարերգակ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից:

Ռուս սրբապետության հանդեպ ունեցած իր վերաբերմունքի և իր վրա

գործած նրա ազդեցության աստիճանի մասին Չ. Հովհաննիսյանը խոսում է Յու. Վեսելովսկուհե գրած պատասխանում:

Հայ կլասիկը իր նամակի սկզբում ընդգծում է այն նշանակալի դերը, որ կատարել է ուսու գրականությունը հայ նորագույն գրականության պատմության. հայ գրողների ստեղծագործական զարգացման մեջ:

Ժամանակակից երիտասարդ բանաստեղծները և ընդհանրապես հայ գրողները սակավ բացառությամբ, նույնիսկ որևէ օտար լեզու չլիտեն, բացի ռուսերենից, և նրանց ամբողջ զարգացման սղբյուրը գերազանցումն ուս գրականությունն ու գիտությունն է. եվրոպական գրողներին էլ նրանք ծանոթանում են գրեթե բացառապես ռուսերեն թարգմանությունների միջոցով»¹

Այսպես Չ. Հովհաննիսյանի իր պատասխանում կանգ է առնում այն բանի վրա, թե ինչ է եղել ուս գրականությունն իր համար, ինչ ազդեցություն է գործել նա իր ստեղծագործության վրա, և թե ինչպես ինքը՝ հայ բանաստեղծը ծանոթ է ուս գրականությանը մասնաշաղկանացին լու գործին:

Անձամբ իմ մասին կարող եմ հաղորդել, որ թեև առաջին բանաստեղծները, որ ինձ վրա ուժեղ ազդեցություն են գործել, եղել են Բայրոնն ու Հայնեն, սակայն հետո ես խիստ սիրեցի Պուշկինին և Լերմոնտովին: Ճեղքների մենգիներ» նմանողությամբ ես մի ամբողջ պոեմ գրեցի (որ իհարկե երբեք չի տպագրվի). երբ դեռ Լազարյան ճեմարանի աշակերտ էի: Լերմոնտովից բովական շատ թարգմանություններ ունեմ արած (ի միջի ալոց «Մահու հրեշտակ»-ը), բայց չեմ տպագրել դրանք: Պուշկինից մի բանի գործ իմ թարգմանությամբ տպվեց 1899 թ. հոբեկյանական ժողովածուի մեջ և «Տարադ» պատկերազարդ ամսագրում:

Նամակի վերջում Չ. Հովհաննիսյանը թվարկում է նեկրասովից, Պլեշնեից և այլ ուս բանաստեղծներից իր կատարած թարգմանությունները:

Բանաստեղծի թողած ձեռագրերից և նրա անձնական վկայությունից երևում է, որ Պուշկինի պոեզիայի ազդեցությունը Չ. Հովհաննիսյանը կրել է տակավին Լազարյան ճեմարանում, իսկ հետո՝ Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին:

Բացի Պուշկինի ծննդյան հարյուրամյա հոբելյանի առթիվ, 1899 թվին տպագրված հինգ բանաստեղծություններից, Հովհաննիսյանը թարգմանել է ևս երեք բանաստեղծություն՝ «Պոետ» (1880, օգոստոսի 24), «Էլեգիա» (1881, օգոստոսի 11), «Վաստակ» (1883, մարտի 23), որոնք անտիպ մնացել էին բանաստեղծի ձեռագրի մեջ մինչև 1937 թվի: Դրանից բացի, Պուշկինի ազդեցությամբ Հովհաննիսյանը գրել է չափածո վեպ՝ «Վեգենի Օնեգինի» մի նմանողություն, որի առաջին մասը գտնվել և հրատարակվել է մեր օրերում:

Չ. Հովհաննիսյանի պոեմի մեր ձեռքը հասած սեպագրությունը ցույց է տալիս «Վեգենի Օնեգինի» նմանողության բնույթը. դարձյալ հեղինակի հատկապես լիրիկական շեղումներ, հերոսի կենսագրության շարադրումը մանկական տարիներին, նրա դաստիարակությունը, դաստիարակության այդ սխտեմի քննադատությունը և այլն: Չպետք է մոռանալ սակայն, որ դա աշակերտության շրջան էր ոչ միայն այն իմաստով, որ Չ. Հովհաննիսյանը ուսանում էր Լազարյան ճեմարանում, այլև դա բանաստեղծի ստեղծագործական

¹ Ю. Веселовский, նույն տեղում, էջ 10:

ուսումնառության շրջանն էր: Իսկ Պուշկինի պոեզիայի և գրականության ազդեցությունը հայ կղափկի ստեղծագործության վրա հանգեցնել սրան՝ նշանակում է սահմանափակել այդ ազդեցությունը զուտ արտաքին մոմենտով: Սինչևեռ այդ ազդեցությունը շատ ավելի խոր ստեղծագործական բնույթ ունի: Դա արտահայտվել է Հ. Հովհաննիսյանի գաղափարական զարգացման, ժողովրդականության նրա ձգտումների և բարձր գեղարվեստականության, նրա պոեզիան ինքնակալության դեմ մղվող համառուական պայքարի հունը մտցնելու մեջ: Իր պոեզիայի այս հատկանիշների համար Հ. Հովհաննիսյանը, ինչպես և բոլոր հայ մեծ գրողները, պարտական է ուսու և հայ ժողովուրդների գեմոկրատական գրականությանը, ուստի և Պուշկինին ու Լերմոնտովին նա դասում է իր ուսուցիչների թվում: Այդ ներգործությունն արտահայտվել է Հ. Հովհաննիսյանի՝ ուսու գրականությունից կատարած բազմաթիվ փայլուն թարգմանությունների և ուսու գրականության համաշխարհային նշանակության մասին ունեցած նրա բարձր գնահատականի մեջ:

Ուսու գրականության երկերի թարգմանությունն սկսելով Պուշկինի անմահ բանաստեղծություններից՝ Հ. Հովհաննիսյանը շարունակեց այդ զբաղմունքը տասնյակ տարիներ, հայ գրականությունը հարստացնելով հիանալի թարգմանություններով: Եվ ուսու գրականության ազդեցությունը բանաստեղծի ստեղծագործական աճման վրա, որ ըստ նրա խոստովանության սկսվել էր դեռ Լադարյան ձեռարանի ուսումնառության տարիներից, շարունակվեց Հ. Հովհաննիսյանի ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում:

Նվ վերջապես 80-ական թվականներին Պուշկինից արված թարգմանություններից անհրաժեշտ է նշել «Ոսկե ձկնիկի» թարգմանությունը Ղ. Աղայանի ձեռքով. այս թարգմանությունը ղեկավարված է երկրորդ դասարանի մայրենի լեզվի դասադրքում (Թիֆլիս, 1889), ինչպես նաև «Գնչուներ»-ի և «Յգիպտական գիշերներ»-ի թարգմանությունը Գևորգ Ասատուրի ձեռքով:

Պուշկինի երկերի հայերեն թարգմանության ամենաբնագավոր շրջանը նախատուվաական տարիներին, անցած դարի 90-ական թվականներն են և համընկնում են մեծ բանաստեղծի ծննդյան հարյուրամյա հոբելյանին, ինչպես նաև 20-րդ դարի առաջին տասնամյակը, բոլորովին այդ ժամանակաշրջանում կատարված պուշկինյան երկերի բոլոր թարգմանությունները բացառապես գրական նոր հայերենով են:

Պուշկինի պոեզիայի ազդեցությունը տարածվեց նոր գրողների, պոետների, դրամատուրգների մի ամբողջ սերնդի վրա: Պուշկինի ժառանգությունը նորից դարձավ գրական կատալի պայքարի առարկա: Որին մասնակցեցին և պոլիտարիատի ներկայացուցիչները՝ հայ բուլշեիկները, որոնք իրենց լիակատար իրավունքն էին ներկայացնում հանձարեղ բանաստեղծի ստեղծագործության նկատմամբ և սքանչելի կերպով օգտագործում էին նրա երկերը ժողովրդի ազատագրման համար մղած պայքարում:

90-ական թվականներին հայ մամուլում լույս է տեսնում ուսու գրականության մոտ 700 երկի թարգմանություն ու այդ գրականության մասին դրված հոգիածներ, 4 անգամ ավելի, քան նախորդ տասնամյակում, որը ցույց է տալիս, թե սրբա՞ն էր աճել հայ հասարակության հետաքրքրությունը ուսու

գրականության նկատմամբ: Դա միաժամանակ և ապացուցում էր ռուս գրականության համաշխարհային նշանակության, ինչպես և բուն հայ գրականության բուռն զարգացումը:¹

«Մուրճ» ամսագրում 1890 թվից պարբերաբար սկսում են լույս տեսնել վրացական, արևմտա-եվրոպական և գլխավորապես ռուս գրականության երկերի թարգմանություններ: «Մուրճ»-ը ռուս գրողները ամենից ավելի ուշադրություն է դարձնում Պուշկինի երկերին:

«Մուրճ»-ի 1890 թվի № 5-ում լույս է տեսնում «Բափառում եմ նա ազմեղակից փողոցներում» բանաստեղծությունը Կրասնոնիկյանի թարգմանությամբ, իսկ Նևոտ Ծատուրյանի թարգմանությամբ լույս են տեսնում «Ռ՛վ վարդ աղջիկ», «Արձագանք», «Բանտարկյալ», «Փոթորիկ», 1894 թվին «Հրեշտակ», «Աշնան առավոտ», իսկ 1895 թվին «Ես կարծում էի», «Բլբուլ», ինչպես նաև «Ժխտ առպետը» ամբողջությամբ՝ Ա. Տեր-Գևորգյանի թարգմանությամբ: 1897 թվին «Մուրճ»-ը թարգմանում է «Ամպակ Լղբալրները» ամբողջությամբ՝ Ա. Տեր-Գևորգյանի թարգմանությամբ, իսկ հաջորդ տարին՝ «Պուլտովա» պոեմը դարձյալ նրա թարգմանությամբ: Ապա «Մուրճ»-ում նորից բավական ժամանակով ընդհատվում են Պուշկինի թարգմանությունները և միայն 1904 թվին հրատարակվում է «Ամպերը», իսկ 1905-ին՝ «Մարգարեն»: Դրա հետ մեկտեղ «Մուրճ»-ում լույս են տեսնում Պուշկինի ստեղծագործությանը վերաբերող քննադատական հոդվածներ: Որոշից ասհրաժեշտ է նշել Ստ. Լիսիցյանի «Պուշկին, նրա կյանքն ու գործունեությունը հոգվածը, որ ղեկավարում է «Մուրճ»-ի 1899 թվի № 4, 5, 6-ում և հետագայում անսնձին գրող լույս է տեսել Թիֆլիսում:

Այս դիրքը հայ գրականագիտության մեջ առաջին մենագրությունն էր ռուս գրողի մասին:

Ստ. Լիսիցյանն իր հոգվածներում, ինչպես և զբոսում, կանգնած է գաղափարական արաշտվոր դիրքերի վրա՝ շատ բանում հետևելով ռուս լրերում բուրժուազիայի քննադատությանն ու գրականագիտությանը, որը, հակառակ բանաստեղծի ստեղծագործական կենսագրության փաստերի, առասպելներ էր տարածում Պուշկինի նիկոլայան Ռուսաստանի հետ հաշտվելու: Պուշկինի լրերալիզմի, նրա՝ ղեկաբերիստական գաղափարներից հետևաբար մասին: Սակայն դրա հետ մեկտեղ Ստ. Լիսիցյանը Բելինսկու նկատելի ազդեցությամբ անց է կացնում այն գաղափարը, որ Պուշկինի ստեղծագործությունը մի հսկայական քալ է ռուս գրականության զարգացման մեջ, մանրամասնորեն կանգ է առնում նախապուշկինյան գրականության ուղղությունների վերլուծման վրա, ըստ որում երևան բերելով գրական փաստերի և պատմական իրադրության քաջ ճանաչություն:

Պուշկինի հոբելյանի կապակցությամբ «նոր խորձ» ամսագրում իր ուշացած արձագանքը գտավ Պիսարևի՝ Պուշկինի պոեզիայի նշանակության նիխիլիստական բացատրումը:

1897 թվին նոր փորձի՝ № 1—2-ում տպագրվում է Հով. Գոմենու «Ի՛ն է կտակել իր աղբին Ա. Ս. Պուշկինը» հոգվածը, որտեղ հեղինակը արտահայտելով իր որոշ անհամաձայնությունը Պիսարևի հետ՝ Պուշկինի պոեզիայի

¹ Տեղեկությունները բաղված են գովառությունից. Ռ. Հովհաննիսյանի վերոհիշյալ ախտաբանությունից:

պատմական նշանակության վերաբերյալ, հանդուժ է այն եզրակացության, որ թե՛ իր ժամանակին և թե՛ այժմ Պուշկինի սյունդիան արժեք չունի, աճող սերնդի դաստիարակության միջոց չի եղել և չէ:

«Մեր կարծիքով,— գրում է Գնունին,— երեք ընդհանուր եզրակացություն կարելի է բերել Պիսարեի ընդարձակ հոգվածից»¹ Պիսարե 1) հերքում է Պուշկինի պատմական նշանակությունը. 2) պնդում, թե նրա պոեզիան անպետք է և անսպասելի բան է ժամանակակից սերնդի համար, որովհետև չի կարող պատասխանել նրա հանապազօրյ ամենատարրական պահանջներին. 3) ծաղրելով ծաղրում է նրանց, որոնք Պուշկինին համամարդկային պոետ ճանաչելով, տեղավորում են նրան Եվրոպայի առաջնորդ պոետների հետ մի աստիճանի վրա:

Զրնգունելով կրիտիկայի առաջին կետը՝ մենք երկու ձևերով պատկերում ենք նրա մյուս երկու կետերի տակ» (էջ 76):

Զրմունելով պատմական իրադրությունը, որում հանդես եկավ Պիսարեն իր հոգվածներով, խորամուխ չլինելով նրա հայացքների սխատմեին՝ Պիսարեի հայ հետևորդը, ինչպես և ամեն մի էպիգոն, հանդեց ցնդարանության, հայ գրականության զարգացման պատմության փաստերը էկզոթիկուն՝ հավաստելով, որ իբր թե «Պուշկինը հետո է հայ ժողովրդից»:

Հ. Գնունու ելույթը սցեներեց ուսուցիչի մամուլին, որն առանց պրան էլ գրեթե անսրբող ջղախության մտալով էր արձագանքել մեծ բանաստեղծի հրեքելանին: Բնական է, որ Գնունու ուսուցիչին, նիհիլիստական ելույթը պետք է հանդիպեր հայ գրականության տառապիմական ուժերի հակահարվածին:


1897 թվի հոկտեմբերին Ա. Արասխանյանը «Մուրճ»-ի N 19-ում քննադատության ենթարկեց Հ. Գնունու հոգվածը և «նոր խորճ»-ի զիրքը, որպես հայ քննադատական միտքը, Պուշկինի գնահատման հարցում, ճիշտ ուղուց շեղվելու փորձ. որպես մի հետադարձ քայլ հայ քննադատության զարգացման մեջ: Արասխանյանը կարծում է, որ ընդհանրապես՝ Պուշկինին տակավին լավ չեն ճանաչում. որ Պուշկինին ինչպես որ կարդացել են, դեռ շատ տարիներ էլ պիտի կարդան:

Պուշկինի երկերի թարգմանությանն ուղարկություն է դարձրել նաև հայ լիբերալ բուրժուազիայի օրդան «Մշակը»: 1899 թվից սկսած թերթում սուպերված են բանաստեղծի մի քանի երկերը, որոնցից պետք է նշել «Լիրշալի» պատմվածքը Հ. Հովհաննիսյանի թարգմանությամբ: «Մշակ»-ում լույս են տեսել նաև մի շարք քննադատական հոգվածներ Պուշկինի մասին, որոնցից պետք է նշել ուսուցիչի գրականության պրոպագանդիստ ու բաղձաթիվ բանաստեղծությունների թարգմանիչ Ալ. Մատուրյանի վեց ընդարձակ հոգվածները՝ «Նամակներ Մոսկվայից»:

Մեծ խանդավառությամբ և Պուշկինի նկատմամբ տառապանքով սիրով զրված այդ հոգվածներում Ալ. Մատուրյանը տալիս է Պուշկինյան հրեքելան օրերի մանրամասն նկարագրությունը Ռուսաստանում:

«Այս երեք օրը, կարելի է ասել, ամենաուսուղարկ օրերն էին ուսուցիչի կյանքում»:

¹ Խոսքը Պիսարեի «Թեկնիսին և Պուշկինը» հոգվածի մասին է:



Ալենքսանդր Մատուրյանը հայ ընթերցողի համար պարզաբանում է Պուշկինի պոեզիայի հսկայական նշանակությունը ուսու ժողովրդի, ինչպես և մյուս ժողովուրդների կյանքում՝ միանգամայն արդարացի համարելով, որ Պուշկինի հոբելյանը Ռուսաստանի ամբողջ գրականության ու ժողովուրդների տոնն է։

Հանձինս Պուշկինի, այսօր գրելը տոնում է իր փառավոր հաղթանակը մի բազմամիլիոն ազգի մեջ։ Պատիվ այն ժողովուրդին, որ ընդունակ է հաղթվելու գրչի ուժից, ընդունակ է ոգևորվելու սրտի խոսքով, ընդունակ է գլուխ խոնարհելու բարի տաղանդի առաջ»։

Արտահայտելով հայ ղեմավարտիայի մտքերն ու զգացումները՝ Մատուրյանը պաշտպանում է Պուշկինի գրական ժառանգությունը, ռեակցիոն կղերական «գրչի ավազակներից», որոնք կեղծավորաբար փառաբանում, ներբողներ են երկում իրենց իսկ հայրերի ձեռքով հալածված ու սպանված բանաստեղծի հասցեին։

Այդպիսի «գրչի ավազակներ», «գրական ղեռուներ» ճանաչում էր և՛ հայ իրականությունը և ամենից առաջ դրանց դեմ էին ուղղված Ալ. Մատուրյանի հարվածները։

Մատուրյանն իր հոդվածներում հաճախակի ընդգծում էր այն միտքը, թե՛ հայ գրականությունը սովորել է և ամենից ավելի պետք է սովորի ուսու գրականությունից, իսկ հայ հասարակությունը միշտ էլ սիրել է ուսու գրականությունը։

Մատուրյանը կարողացել է բարձրացնել և ցայտուն կերպով արտահայտել ուսու գրականության նշանակությունը հայ գրականության համար։

«Ռուս գրականության ազդեցությունը հայ գրականության (իհարկե ուսահայաց պրականություն) վրա՝ ըստ իս մեծ է, և դժվար է մեր գրողներից մատնանշել մեկին, որը այս կամ այն չափով ընկած չլիներ այդ ազդեցության տակ»։¹

Իսկ իր մասին Մատուրյանն այսպես է գրում.

«Իսկ ինչ վերաբերում է ուսու գրականության ու պոեզիայի ազդեցությանն ինձ վրա, ապա դա հսկայական է։ Իմ համեստ քնարը շատ բանով է պարտական այդ ազդեցության»։²

Սրանք լուկ խոսքեր չեն։

Մատուրյանը հայ գրականության մեջ հանդես է եկել ոչ միայն իբրև ինքնուրույն բանաստեղծ, այլև ուսու գրականության երկրի բեղմնավոր թարգմանիչ։ Ռուս բանաստեղծներից կատարած նրա թարգմանությունների թիվը հասնում է ավելի քան 150-ի, և դրանց մեջ կան այնպիսի հսկաների երկեր, ինչպես Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Պլեշչենը, Կոլցովը և այլն։

Դեռ 1890-ական թվականների վերջերին Մատուրյանը մտադրվեց ուսու գրականության թարգմանությունների մի խոշոր ժողովածու հրատարակել, որի մեջ հիմնական տեղը պետք է գրավեին Պուշկինի երկերը։ Նա իրագործեց իր մտադրությունը՝ 1905 թվին Մոսկվայում հրատարակելով «Ռուս բանաստեղծներ» երկհատորյակը, սրտեղ զետեղված էն ուսու բանաստեղծներից

¹ Ю. Веселовский, նույն տեղում, էջ 28։

² Ю. Веселовский, նույն տեղում, էջ 28—29։

կատարած իր մի շարք թարգմանությունները, այդ թվում 27 լիրիկական բանաստեղծություն Պուշկինից և «Բախչիսարայի շատրվան» պոեմը: Բացի դրանից, Մատուրյանը Պուշկինից թարգմանել է և ուրիշ գործեր, որոնց մասին կխոսենք ստորև:

Պուշկինի երկերից թարգմանող նախորդ հայ բանաստեղծների համեմատությամբ Մատուրյանը լայնորեն բացահայտեց հայ ընթերցողի առաջ ուսման ընթացքում լիրիկայի ճոխությունը, առաջին անգամ թարգմանեց նրա այնպիսի ազատատենչ բանաստեղծությունները, ինչպես «Գյուղը», «Չառգա-կին»: Շատ տեղերում Մատուրյանը տեքստի և դադափարական բովանդակու-թյան տեսակետից վերազանցեց իրենից առաջ եղած թարգմանիչներին: Մատուրյանի մոտ մենք չենք կարող դռնել պուշկինյան տեքստի այլանդակ, մի-տոմնավոր ազավաղումներ, որովհետև Մատուրյանն ինքը գիտակցում էր թարգմանչի մեծ պատասխանատվությունը, որի մասին խոսել է Նար-Դոսին դրած նաժակում:

Դրա համար էլ Ալ. Մատուրյանը հայ գրականության մեջ գրավում է պատվավոր տեղ որպես առաջնակարգ թարգմանիչ, ուստի գրականության, մասնավորապես Պուշկինի պոեզիայի ջերմ պաշտպան ու ժողովրդականաց-նող և իր գործունեությամբ երկու երբայրական ժողովուրդների գրականու-թյուններն ավելի մոտեցնող:

Մեծ բանաստեղծի հոբելյանին արձագանքած և նրա գործերից հաճա-խակի տպագրած պարբերական մամուլից պետք է հիշել «Տարազը», որտեղ 1893 թվին տպագրված է «Վերածնունդ» բանաստեղծությունը Ալ. Մատուրյա-նի թարգմանությամբ, 1895 թ. «Ավազակ եղբայրներ» պոեմը Գ. Տեր-Ջաքա-րյանի թարգմանությամբ: Հոբելյանի տարին՝ 1899 թ. «Տարազը» մի հատուկ համար է նվիրել բանաստեղծի հիշատակին և ղանազան մարդկանց թարգ-մանությամբ տպագրել է «Հուշարձան», «Կովկաս», «Բանաստեղծ» և այլն, ինչպես նաև ղետելել է գավառների արձագանքը հոբելյանի մասին:

Կանգ շառնելով այլ հանդեսների ու թերթերի վրա, որոնք այս կամ այն չափով մասնակցել են Պուշկինի երկերի մասսայականացմանը, մի քանի խուրճ ասենք այդ տարիներին լույս տեսած Պուշկինի առանձին հրատարա-կությունների և ժողովածուների մասին, որոնց մասնակցել են գրեթե բոլոր անվանի հայ գրողները:

«Տարազը» հրատարակչությամբ 1899 թվին լույս տեսավ մի ժողովածու, որտեղ ղետելված են Պուշկինի հինգ լիրիկական բանաստեղծությունները և «Գնչուներ» պոեմը: Նույն թվին լույս է տեսել «Քնար Պուշկինի» մեծ ժողո-վածուն, որի մեջ ղետելված են 25 լիրիկական բանաստեղծություն Ալ. Մա-տուրյանի թարգմանությամբ, 3 բանաստեղծություն՝ Հ. Հովհաննիսյանի և Քարեն հյուր» գրամատիկական տեսարանները՝ Կ. Կրասիլնիկյանի թարգմա-նությամբ:

Կ. Կրասիլնիկյանը ուստի գրականության լավագույն հայ թարգմանիչնե-րից մեկն է: Նրա բաղմամբով թարգմանություններից ամենակատարյալն է Պուշկինի «Հավերժահարսը», որն արժանացել է հայ քննադատության ջերմ հավանությանը, և որի համար Կ. Կրասիլնիկյանին անվանել են «Հայ ժու-կտակի»:

1895 թվին Բիֆլիսում լույս է տեսնում «Ժլատ ասպետը» Ա. Տեր-Գրիգորյա-նի թարգմանությամբ և որ խիստ հատկապես է Պուշկինի երկերը հայ

Ժողովրդի մեջ մասսայականացնելու տեսակետից, նույն 1895 թվին հեռավոր Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական) Ա. Կարապետյանը թարգմանում է «Կապիտանի աղջիկը»։ Թարգմանվում է «Պոլտավա» պոեմը (Ա. Տեր-Գրիգորյան), «Տերտերը և նրա Բալդի ծառան» հեքիաթը (Ա. Խնկոյան), իսկ 1905 թվին, ինչպես վերևում ասվեց, Մոսկվայում լույս են տեսնում Ծատուրյանի կազմած «Ռուս բանաստեղծներ» ժողովածուները։ Այսպիսով, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ գրականության մեջ ստեղծվում է պոեզիկայի երկերի թարգմանությունների մի խոշոր ֆոնդ, ստեղծվում է թարգմանական որոշակի տրադիցիա, որի մշակմանը մասնակցել են այնպիսի ակադեմիկոս հայ գրողներ ու բանաստեղծներ, ինչպես Հ. Հովհաննիսյանը, Ալ. Ծատուրյանը, Հովհ. Թումանյանը, Ա. Խնկոյանը և այլն։

Հովհաննես Թումանյանի՝ հայ պոեզիայի պայծառ հուսատեղության ամենափայլուն աստղի,— ինչպես անվանել է նրան Բրյուսովը,— թարգմանական պոեմներից են Վոլգայի գրական ժառանգության ստեղծագործական խոր յուրացման տիպարը։ Թումանյանը անցյալի հայ բանաստեղծներից ամենից լավ է հասկացել Պոլշկինի և այն, ինչ նա թարգմանել է ռուս մեծ բանաստեղծից, հայ գրականության մեջ միում է որպես կլասիկ օրինակ, որովհետև նա ոչ թե ստրիկաբար ընդօրինակել է բնագիրը, այլ ստեղծել է անկրկնակալ թարգմանություններ։

Դրա հետ մեկտեղ Հովհ. Թումանյանը եղել է այն բանաստեղծը, որ կարողացել է շատ բանով ձիջող գնահատել Պոլշկինի ստեղծագործությունը, ռուս գրականության համաշխարհային նշանակությունը և այնտեղից քաղել ժողովրդագնություն, հումանիզմի վեհ գաղափարներ, գեղարվեստական բարձր ձևեր։

Պատասխանելով Յու. Վեսելովսկու հարցին, թե ի՞նչ չափով է ինքը գտնվում ռուս գրականության ազդեցության տակ, Հովհ. Թումանյանը ընդգծում է այն ճշմարտությունը, որ ռուս մեծ գրականության ազդեցությունն իր ստեղծագործության վրա եղել է. «Ոչ թե իմ ոտանավորների տողերում,— որովհետև երբեք գիտությանը հետևած ու նմանած չեմ ոչ մի քանաստեղծի,— այլ իմ հոգու, գրական ճաշակի ու հայացքների վրա»։¹

Թումանյանի ստեղծագործական գեմբի ձևավորվելու մեջ ռուս գրականությունը կարևոր դեր է խաղացել դեռ նրա դպրոցական տարիներից.

— Դտա,—շարունակում է Հովհ. Թումանյանը վերոհիշյալ նամակում,—որ նույնիսկ դեռ դպրոցում սովորած (թե դպրոցից դուրս կարդացած) ռուս գրողները—բանաստեղծների գործերը ինձ այնքան հարազատ ու սիրելի են, որ. Պոլշկինի «Буря мглою» և այլն, «Полтава», «Цыганы», կամ Լերմոնտովի «Демон» և այլն, «Ангел», «Ветка Палестины», «Песня про царя Ивана Васильевича», «Три пальмы», «Мцыри», «Тучки небесные, вечные странники!», «Спор», «Выхожу один я на дорогу», «Пророк», «И скучно, и грустно» ինձ այնքան սիրելի են եղած միշտ, և մանավանդ գրանցից մի քանիսն էլ թարգմանած եմ, ինչպես Լերմոնտովի «Мцыри», «Ангел», «Я не хочу, чтоб свет узнал» կամ Պոլշկինի «Утопленник», «Песнь о вещем Олеге», «Заклинание», «Романс», որ անշուշտ ազդած պիտի լինեն ինձ վրա։

Բայց այնչի՞ն ասեմ։ Ռուսաց բանաստեղծները— գլխավորապես Լեր-

¹ Ю. Веселовский, նույն տեղում, էջ 21։

մոնտավը և Պուշկինը, միշտ ինձ ավելի հարազատ են թվացել, քան մեր հայոց բանաստեղծները: (Խոսքս իմ նախորդ շրջանի մասին է):

Ճակատագրի քմահաճույթով մեր բանաստեղծներին ապրել ու երգել են խորթ ու հեռու մեր աշխարհից... և նրանց երգերի մեջ չկան ոչ մեր բնությունը, ոչ մեր ժողովուրդը... Մինչդեռ ռուս բանաստեղծը երգում է

Как я любил Кавказ мой величавый,
Твой сынов воинственные нравы

և մի շարք պոեմներով ու ոտանավորներով, ինչպես „Демон“, „Мцыри“ երգում է Կովկասի սարերը, ժողովրդի սովորություններն ու լեզենդները: Կամ Պուշկինը՝ „Кавказ подо мною“, „Кавказский пленник“ և առհասարակ այնքան ազդված է Կովկասի սարերից: Նրանք սիրել ու երգել են Կովկասի լեռներն ու լեռնցիների կյանքը:

«Աս էլ իբրև Կովկասցի ու լեռնցի, սիրում եմ այդ երգերն ու պոեմները: Եվ թեպետ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ես ունեցել եմ իմ հոգում, բայց նրանք դրդել են ինձ ու տվել պոեմի այն ձևը, որով գրել եմ ևս, որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմա չի եղել, որ երգեր մեր բնությունը, ժողովրդի սովորություններն ու ավանդությունները:

Բայց այն էլ ասեմ, որ ինձ ղգում եմ վաղուց ազատված նրանց ազդեցությունից, նրանց ազդեցության տակ միայն սկսել եմ»¹

Թումանյանը կատարյալ իրավամբ իր հոգովածներից մեկում Պուշկինին և Լերմոնտովին անվանել է «Կովկասի որդեգրած հանճարներ»:

«Անուշ», «Մարտ», «Լոռեցի Սաքոն» պոեմներում Թումանյանը պատկերել է դուռաբացու նահապետական կյանքն ու բարքերը, տվել է գեղջկական կենցաղի, հայրենի երկրի խստաշունչ բնության պատկերներ: Թումանյանը Պուշկինից ու Լերմոնտովից է սովորել ժողովրդական կյանքի, հայրենի բնության պատկերումը՝ պահպանելով ըստ այդմ հայկական կուլտուրա, ազգային յուրահատկությունը. այն ինքնատիպությունը, որի մասին խոսել է Վ. Բելինսկին, որպես ինքնուրույն դրողի տաղանդի նշանի: Եվ դրա համար էլ Թումանյանը ռուս պոեզիայի հանճարների ազդեցությունը տեսնում էր ոչ թե իր երկերի արտաքին ձևի մեջ, այլ նրա դադափարական ազդեցության մեջ՝ իր գրական ճաշակների ու հայացքների ձևավորման վրա: Պուշկինը Թումանյանին հուզում էր նրանով, որ ռուս մեծ բանաստեղծի պոեզիայում, ինչպես հայելու մեջ, արտացոլված է անընդգրկելի Ռուսաստանը և ռուս ժողովրդի կյանքը: Թումանյանը Պուշկինին մեջ գտել է ազգային, ժողովրդային բանաստեղծի տիպար. 1923 թվականին մի զրույցում, թե ո՞ւմ կարելի է անվանել ազգային բանաստեղծ, Թումանյանը նախ և առաջ տվել է Պուշկինի անունը:

«Պուշկինը ազգային մեծ բանաստեղծ է, ազգային բանաստեղծը պետք է իր երկրից լինի, հարազատ ազգային և համաշխարհային խնդիրներ շուշափի, լայն հորիզոն պիտի ունենա և միաժամանակ բանաստեղծ մտածող փիլիսոփա լինի...»²

Թումանյանը Պուշկինին համարում էր սյուպրիսի բանաստեղծ: Մահվանից քիչ առաջ՝ 1923 թվի հունվարի 8-ին ունեցած իր մի զրույցում Թումանյանը

¹ Ю. Веселовский, նույն տեղում, էջ 21—22:

² «Առաջ. գրակ.» № 2, 1937 թ., էջ 180:

նյանն ասել է. «Պուշկինը, չգիտեմ նամականերից որում, գրում է՝ էն ո՞ր սատանեն արավ, որ ես Ռուսաստանում բանաստեղծ ծնվեցի: Եվ իսկապես, երկիրը շատ էր աննպաստ Պուշկինի համար: Բայց Պուշկինը ուրիշ տեղ էլ՝ կարող ապրել, Բանաստեղծն իր երկրում պիտի լինի, միայն և միայն իր երկրում կարող է ապրել բանաստեղծը: Նույնը և ես կարող եմ ասել— մեր երկիրը շատ էր խառը, տակն ու վրա: Ո՞ր գնաս, ո՞ր մնաս... բայց ևս միայն իմ երկրում կարող եմ ապրել»¹:

Թումանյանը Պուշկինի պոեզիայում գտավ ձևի կատարելություն, չափատույի բարեհնչունություն: Նա ասում էր, որ Պուշկինի պոեզիայում թաքնված է գեղարվեստական բարձր ձևի գաղտնիքը, որ «Պուշկինը մեծ բանաստեղծ է, խոշոր, հոյակապ բանաստեղծ. նուրբ հոտառություն ունի և գեղեցիկ ճաշակ: Պուշկինի պոեզիայի նկատմամբ Թումանյանն իր խոր սերը պահեց ողջ կյանքում՝ հաճախակի վերադառնալով այն հարցին, թե ինչ է եղել Պուշկինի պոեզիան իր համար: Ահա մի հատված այն զրույցից, որ նա ունեցել է 1915 թվին և որ հիշողությամբ գրի է առել նրա դուստր՝ Ն. Թումանյանը:

«Միրում եմ կարդալ նրա պոեմաները. „Полтава“, „Цыганы“, „Кавказский пленник“ և մյուսները, բայց գրվածքներից գիտե՞ք որն եմ ամենից շատ սիրում, իսկի չեք էլ կարող երևակայել... „Зимний вечер“-ը: Միբու՜մ եմ էդ բանը, որովհետև գերազանցորեն ուսական է. շատ է սիրուն ու հաջող:

— Գոհա՞ր է գոհա՞ր ուսաց գրականության մեջ: Հիմի կացեք ձեզ մի բան պատմեմ:

Էն տարին (1912) Պետերբուրգ, բանտից ազատվելուց հետո, մի իրիկուն, ուսու շրջանից մի խումբ գրողներ ու գրական մարդիկ ինձ տարան Դնեթրի: Էնտեղ էր և Կորյունկոն. ծանոթացանք ու շատ մոտեցանք: Լավ մարդ էր. կատարյալ ուս մարդ: Ընթրիքից հետո, միասին դուրս եկանք ու խոսելով զնում էինք տուն, նա ինձ էր ճամբու ղնում, ես նրան. զրից անելով ղնում ենք... Խոսք ընկավ Պուշկինից: Սա ինձ հարց տվեց, թե Պուշկինի գրվածքներից ո՞րն է ինձ վրա ուժեղ տպավորություն արել ո՞րն եմ ամենից շատ սիրում:

Նա երևի կարծում էր, թե ես Պուշկինի խոշոր գործերից մեկի ո՞ն ենք կրամ. երբ որ ասի «Зимний вечер»-ը, նա շատ զարցամավ. ինքը «ե՛լ գեներ Օնեգինը» և մյուս պոեմների անունները տվեց»²:

Թումանյանը, ինչպես երևում է վերոհիշյալ զրույցի շարունակությունից, առաջին անգամ «Եվգենի Օնեգինը» կարդացել է 1909 թվին, բայց և 1912 թվին էլ լիովին չի կարողացել զնահատել այդ հանճարեղ երկը: Սակայն 1923 թվին Թումանյանը դարձյալ վերադարձել է այդ երկին: Մեծ բանաստեղծն ամբողջ երեկոն լսել է «Եվգենի Օնեգինի» րնթերցումը և այնքան է սքանչացել, որ դանկություն է հայտնել մի երկ գրելու ազատամիտ, կրթված, սակայն ավանդությունների ուժով կաշկանդված հայ կնոջ մասին՝ պուշկինյան Տատյանայի նմանողությամբ: Իսկ վեպի այն տները, որտեղ նկարագրված է բնությունը, Թումանյանն անվանել է բանաստեղծական վարպետության հրաշք, գեղարվեստական բարձր նվաճում, երբ բառերը նեղ են գալիս հախուռն մտքերին:

Թումանյանը Պուշկինի մեջ տեսնում էր ողորդ իրեն հարադատ բանա-

¹ «Խորհ. դրակ.» № 2, 1937 թ., էջ 192:

² Ն. Թումանյան, Պուշկինը և Թումանյանը («Խորհ. Գրակ.», 1937, № 2, էջ 184):

ստեղծին, բնդհանրությունը էր գտնում ստեղծագործական կյանքում՝ ժողովրդական բանահյուսությանը մոտիկ լինելու, ազգային հողի վրա անբախտելի կապ ունենալու մեջ: Դրանով է բացատրվում այն մշտական խոր հետաքրքրությունը, որ ունեցել է Թումանյանը Պուշկինի նկատմամբ, դրանով է պայմանավորված Հովհ. Թումանյանի թարգմանությունների գեղարվեստական բարձր արժանիքը:

Դեռ 1890-ական թվերին Թումանյանը թարգմանել է աշակերտական տարիներից սիրած «Թումանս», «Եվ եթե իրավ է, որ գիշերը» բանաստեղծությունները: 1899 թվին Պուշկինի հորեկյանի կապակցությամբ նա թարգմանել է «Ջրահեղձը», «Օլեգի երգը», իսկ 1909 թվին իր ամենասիրած գործը՝ «Ձմռան իրիկունը» և «Ժանսախտի քաղաքը» ողբերգության մի հատվածը՝ Մերիի երգը:

Պուշկինի երկերի թարգմանությունները Թումանյանին կապում են շափազանց սիմվոլիկ մի գեղարվեստական հետ, երբ ուսումնական հանձնարի ստեղծագործությունը և հայ գրականության կլասիկի թարգմանական գործունեությունը կապվեցին պրոլետարիատի ռեուլյուցիոն շարժման հետ:

1903 թվին, հայ բուլշևիկների մի խմբակում, անդեգալ ժողովում, քննության էր անցվում մալիսմեկյան ցուլցի առթիվ թուլցիկների հրատարակելու հարցը: Ներկաների համար անսպասելի կերպով Մաեփան Շահումյանն առաջադրում է հայերեն թարգմանել և թուլցիկում տպագրել «Աղատություն» ներբերը:

Հենց այդտեղ՝ ժողովում թարգմանելու փորձերը հաջողություն չունեցան, և որովհեյտ ղեմել Հովհ. Թումանյանի օգնությամբ: Բուլշևիկների կողմից կազմակերպված մալիսմեկյան ցուլցին հնչեցին Բեմ Պուշկինի ներբերիչալ տաղերը: Թումանյանի թարգմանությամբ.

Ատում եմ քեզ և բո զահր,
Միահեծան դոռոզ ցար,
Եվ բո որդոց ու բո մահր
Պիտի տեսնեմ անպատճառ:

Այս սկզբնական փուլում մեջ ոչ մի պատահականություն չկա: Պուշկինի արժանի ժառանգը, թե՛ ուսական և թե՛ բոլոր ժողովուրդների գրականության մեջ, ուղղատարված աշխատավոր ժողովուրդին է: Դրա համար էլ նախառեուլցիոն տարիներին Պուշկինի երկերի թարգմանությամբ զբաղվում, նրա ստեղծագործությամբ հետաքրքրվում, նրա պոեզիայի ազդեցությունը կրում էին միայն ռեուլցիայի, պրոլետարիատի հետ կապված բանաստեղծները՝ Լ. Տերյանը, Արաղին և ուրիշներ:

Հայ գրականության առաջին պրոլետարական արձակագիր Մ. Արաղին Պուշկինի երկերի իր սկզբնական ծանոթության մասին գրում է.

«Նրանից առաջին տպավորություններ ստացել եմ ուսական դպրոցում: Առաջին իսկ քաղերից հանձարեղ բանաստեղծը զարմացրել է ինձ իր հատկությամբ ու պարզությամբ. բայց է՛լ ափնի՛ բնությունը հավատարիմ լինելով: Երբ էլ որ ես կարդայի «Ձմռան իրիկունը», միշտ էլ թվում էր, թե անմիջականորեն, իսկապես շողափում ես բնությունը:

Դրան հաջորդեց Պուշկինի պոեզիայի մի ուրիշ հզոր դժի ազդեցություն:

նր — մարդկային բնավորության հավատարիմ մնալը, մարդկային բնավորությանը՝ իր դարաշրջանի հոյակապ տիպերը պատկերելու նրա աննման ընդունակությունը: Ոնեգիներ, Տառլանան, Լենսյին, Սլվան, Պիմենը և այլն կանգնում էին երեակայության առաջ՝ կենդանի ու հասկանալի, շերմացած բանաստեղծի համապարփակ սիրով:

Բայց արդեն բարձր գասարաններում մենք սկսեցինք հասկանալ, թե ինչու բանաստեղծն ասում է. «Ես ապրել եմ ուղում, որպեսզի մտածեմ ու տառապեմ». մենք տեսանք, որ Պուշկինը այն չէ, որի մասին այնքան ժուտ կերպով գրում էին ցարական շրջանի պետական գասագրքերում: Մեր առաջ հանում էր բանաստեղծ մտածողի, ժողովրդի ազատության համար մարտընչողի հոյակապ կերպարանքը: Մենք տեսանք, որ Պուշկինի «Հուշարձանը» տղավաղված է քրեատոմատիայում, որ նա ոչ թե «չափածոյի աշխույժ ուրապույրով է օգտակար», ալլ նրանով, որ «Եմ լսվածն զարում ես երգեցի ազատություն»: Պուշկինը հանճարեղ բանաստեղծ է, դեկաբրիստների բարեկամը, ազատության բարեկամը և դրա համար էլ աստի՛ էր ցարական ինքնակալությանը և դարձավ նիկոլայան կատաղի ռեակցիայի զոհը: Նրա մահը հավերժական բողոք է ցարական դեպոտիզմին ու կամայականությանը:

Այսպես միայն կարող էր քնկալել ապագա պոլեմարական գրող Արագլին ազատության ճշմարիտ բարեկամի՝ ինքնակալության դեմ հանուն ժողովրդի երջանկության. պայքարի կոչող Պուշկինի պոեզիան: Իսկ Արագլին Պուշկինի մոտ ստնում էր այն վսեմ արվեստը, որը ժողովրդայնության նշաններից մեկն է:

«Նրա հանճարեղ զեղարվեստական խոսքը՝ լի պատկերներով և մտքերով, նրա պարզությունն ու դիպուկությունը, այս բոլոր գծերը հրապուրում էին բանաստեղծներին նրա բարձրարվեստ երկերի մեջ: Հարմանալի է Պուշկինի պոեզիայի բյուրեղանման մաքրությունը, հստակությունն ու երաժշտայնությունը և այնուամենայնիվ կարծես դժվար է ասել տարբերել արձակից, որ առանձնապես զգացվում է «Նեգլենի Օնեգինի» մեջ:

Որպես արձակագրի, ինձ հրապուրում էր Պուշկինի արձակը. նրա խոսքը հորդում է ազատ, թաքուն երաժշտայնությամբ, որպես աղբյուրի խոխոջ, և դարմացնում է պատկերման առավելագույն հակիրճությամբ ու ճշգրտությամբ: Հարուստ մտքերը ցայտում են՝ տանելով դեպի վերջնական ընդհանուր զարգացում: Պուշկինին կարողալիս մտածում ես. — ամոթ է երկար գրել, մանվածապատ, անորոշ... Պուշկինը եղել է և կլինի երիտասարդ բանաստեղծների և գրողների մեծ ուսույցիչը»:

Այսպիսով պոլեմարական գրականությունը դարձավ Պուշկինի պոեզիայի միակ և իսկական ժառանգը: Դրանով է բացատրվում և այն, որ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելուն նոխորդած տասնամյակում՝ 1911—1921-ը, Պուշկինի գործերից ապագրված է ընդամենը 12-ը, ըստ որում դրանց մեծ մասը հին թարգմանությունների արտատպություններ են: Իսկ հայ ժողովրդի սխերիմ թշնամիների՝ զաշնակների տիրապետության շրջանում ոչ միայն ոչ մի գործ չի տպագրվել Պուշկինից, այլև ընդհանրապես ուռա գրականությունից:

Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու հենց առաջին տարիներից լայն թափ ստացան ուռա գրականությունից, այդ թվում և Պուշկինից կատարված թարգմանությունները: Եվ ի՞նչ խոսելով նախասովետական

շրջանում Պուշկինից կատարված թարգմանությունների մասին՝ հնարավոր է տալ բոլոր թարգմանությունների անունները, հիշատակել այն թերթերն ու հանդեսները, որոնց մեջ պարբերաբար լույս են տեսել մեծ բանաստեղծի անվան հետ կապված այս կամ այն նյութերը, ապա սովետական շրջանում թարգմանությունների պարզ թվարկումը, թարգմանիչների և այն թերթերի ու հանդեսների անունները, որտեղ նյութեր են տպագրված Պուշկինի մասին, կկազմեր մի լուրջ բիրլիոգրաֆիական աշխատություն։ Սկսած ռեպուբլիկական կենտրոնական թերթերից՝ «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Գրական լիեր» և վերջացնելով շրջանային, գործարանային և այլ բազմաթիվ թերթերով, գրական-գեղարվեստական, քաղաքական և այլ ամսագրերով, միջնակարգ և բարձրագույն դպրոցների դասագրքերով, զանազան ավանդականերով, ժողովածուներով, քրեստոմատիաներով և այլն, ամենուրեք տպագրված են Պուշկինի երկերը։

Ռ. Հովհաննիսյանի «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատությամբ» մենագրության մեջ, սովետական շրջանի հայ կենտրոնական մամուլում և Պետհրատի հրատարակություններով տպագրված Պուշկինի երկերի բիրլիոգրաֆիան կազմում է տասնյակ էջեր։ Եվ վերջապես Պուշկինի երկերը հայ ժողովրդի մեջ լայնորեն մասսայականացնելու լավագույն փաստն այն է, որ Պուշկինի ստեղծագործությունը երկու տասնամյակից ավելի է, ինչ մտցված է դպրոցների ծրագրի մեջ, ավանդվում է հայկական դպրոցների հայ և ռուս գրականության պատմության դասընթացում։ Սոցիալիզմի երկրում իրագործված ընդհանուր կրթության հետեւնքով չկա ոչ մի սովետական քաղաքացի, որ ոչ միայն չլսեր, այլև չկարդար և անգիր չիմանար Պուշկինի հանճարեղ գործերը։ Այս փաստը, որ հատկանշական է Սովետական Միության բոլոր ժողովուրդների համար, միշտ չէ, որ լիովին դիտակցում ենք մենք, սակայն դրա մեջ արտացոլված է պատմության մեծագույն կուլտուրական ռեպուցիան, որը երբեք չէ ճանաչել է մարդկությունը։

Այո, Պուշկինը, ինչպես և ամբողջ ռուս մեծ գրականությունը, դարձել է սովետական քաղաքացի Միության բոլոր ժողովուրդների սեփականությունը։

Պուշկինի երկերը թարգմանել ու թարգմանում են սովետահայ բանաստեղծները։ Արդեն մեծ բանաստեղծի մահվան հարյուրամյակի տոթիվ (1937) հայերեն են թարգմանված բոլոր նրա հիմնական գործերը՝ «Ռուսլան և Լյուդմիլա», «Կովկասի գերին», «Ալադաի և Ջաջրներ», «Բախչիսարայի շառվանը», «Գնչուներ», «Կոմս Նուրին», «Պոլտավա», «Պղնձ հեծյալ» ոչնեմները, նրա բոլոր վիպակները՝ «Պետրոս Մեծի արարք», «Բեկինի պատմությունները» (Կրակոյ, Բուք, Դագադագործ, Կաշարանի վերակացուն), «Գուրլուխի գլուխի պատմությունը», «Դուբրովսկի», «Կիրջալի», «Երկպտական գիշերներ», «Վոպրոսանի աղջիկը», «Ճանապարհորդություն դեպի Արզրում», բոլոր դրամաները՝ «Բորիս Գոդունով», «Ժառ տապետ», «Մոցարտ և Սալինի», «Քարե հյուրը», «Խրախճանք ժանտախտի պահին», «Ջրահարս», բոլոր հեքիաթները՝ սկսած «Սալթան թագավորի հեքիաթից», վերջացրած «Բնած դժուհին»-ով, հարյուրավոր լիրիկական բանաստեղծություններ և այլն։ Միայն սովետական շրջանում առաջին անգամ լիովին հայերեն թարգմանվեցին «Եվգենի Օնեգին» վեպը, «Պոեզալովի պատմությունը», «Բորիս Գոդունովը», «Դուբրովսկին» և մի շարք ուրիշ պուշկինյան գործեր, որոնք սկզբում են սովետահայ պարբերականներում, չհաշվելով Հայկոմհրատի լույս. րնծա-

յաժ բոլոր առանձին երկերը: Նշենք միայն Պուշկինի ընտիր երկերի երկհատորյալը, Պուշկինի մասին Բելինսկու, Ջերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Դոբրոև և ուրոց հոգւածնրի ժողովածուն, և 1934—37 թվերին մեր մամուլում Պուշկինի պոեզիայի մասին լույս տեսած ավելի քան 80 ինքնուրույն հոգւածները:

Իսկ սովետահայ գրականության մեջ Պուշկինի երկերի համար բնութագրական է այն. որ անցյալում թարգմանւած երկերից շատ շատերը նորից թարգմանւելնին սովետահայ բանաստեղծների ձեռքով, որոնք անհամեմատ ավելի թարգմանությունը մոտեցրին տեքստին, և բացի դրանից՝ Պուշկինի միեւնույն երկը թարգմանւեց կարծես իրար հետ մրցող մի քանի բանաստեղծների կողմից՝ մասսայական ընթերցողին իսկական Պուշկին ընձեռելու համար: Դրա համար է, որ հայ գրականությունն սին «Հուշարձանի» մոտ տաս թարգմանություն, «Ազատություն», «Գյուլի», «Անշարի», «Մարգարեի», «Կալանավորի» և ուրիշ բազմաթիւ լիբրկական բանաստեղծությունների 1—5 թարգմանություն, «Պոլտավայի», «Բախչուսարայի շատրվանի», «Կովկասի դերու», «Կապիտանի աղջկա» և այլն 2—3 թարգմանություն:

Բանաստեղծի մահւման հարյուրամյա հոբելյանը չափազանց լայն արձագանք գտաւ Հայաստանում, դարձաւ ռուս ազգային հանճարի և ռուս մեծ ժողովրդի նկատմամբ տածւած համաժողովրդական սիրո պրտահայտություն: Վերհիշելով, թե ինչպես 1899 թվին կատարւեց Պուշկինի ծննդւան հարյուրամյա հոբելյանը՝ Հայաստանի ժողովրդական բանաստեղծ Ավ. Իսահակյանը իր հովածւանրից մեկում գրում է, թե ներկա էին մի քանի տասնյակ մարդ, մի ոչ մեծ սրահում՝ զխաւորապես ուսուցիչներ, իսկ բանաստեղծի իսկական լնահատուղը՝ ժողովուրդը չկար:

1937 թվին ռեսպուբլիկական մամուլից վերցրած նույնիսկ մի քանի պատահական տեղեկությունները ցույց են տալիս, որ Միովան մեջ, ինչպես և ամբողջ Սովետական Հայաստանում, չկար այնպիսի մի անկյուն, որտեղ այդ օրերին Պուշկինյան հանդեսներով չապրեին:

Շրջանային Ալավերդուց հաղորդում էին, որ հունւարի 30-ին և 31-ին բանվարական թատրոնը բեմադրեց «Ժլատ ասպետը»: Դիլիջանում, Պուշկինյան երեկոյին, ներկա էր 400 մարդ: Երևանի Պուշկինի անւման դպրոցում երեք ամսից ավելի պատրաստւում էին տոնելու բանաստեղծի հոբելյանը: Աշակերտները բանաստեղծություններ էին գրում՝ ձոնում Պուշկինին, իսկ փետրւարի 5-ին և 10-ին տեղի ունեցաւ Երեկո՝ զնկուցումով, բանաստեղծությունների արտասանութամբ, մեծ բանաստեղծի երկերից բեմական պատկերներ տալով: Ն ղորամասում տեղի ունեցաւ պուշկինյան երեկո: Բոլոր մարտիկների մոտ կան «Կապիտանի աղջիկը», «Նվզենի մնեզին», «Դուբրովսկին» և ուրիշ երկեր:

Ականավոր սովետահայ բանաստեղծներ Ն. Զարյանը, Ս. Վահունին, Հ. Շիրադը, Գ. Բորյանը, Ս. Տարոնցին և ուրիշներ բանաստեղծություններ, պոեմներ ձոնեցին Պուշկինին:

«Ա. Ս. Պուշկինին» բանաստեղծւթյան մեջ Ն. Զարյանն ասում է.

Ախ, թե լիներ հընարավոր
(Քաղցր ! բոճաւ անկարելին),
Դու ղարթնեիր չանկարծ մի օր
Ստալինյան մեր օրերին...

Ինչպիսի՜ փառք, ինչպիսի՜ սեր
 Կճաշակեր հոգին ըս հուր,
 Երկիրը քեզ կը ողջուներ՝
 Ուսքի ելած միահամուռ:
 Քեզ Առաջնորդը կընդուներ՝
 Կրեմլի պալատն դահլիճներում,
 Քեզ հայրաբար կհամբուրեր,
 Հարցեր կտար, մեզմ ու խոհուն:
 Գու կանցնեիր դուրս կրկին
 Լեռնակուտակ Հայաստանով,
 Քեզ հուր կտար ոչ թե մի կին
 Բանոթնայն մը ամանով:
 Քեզ կընդունիր ուրախ սրտով՝
 Կերածնված մի ժողովուրդ,
 Իւ մեր լեռները ծաղկաթով
 Չէին թվա այնքան ևլ ցուրտ:
 Կտեսնեիր դու նոց աշխարհ
 Քո երգերով, սիրով լեցուն,
 Որտեղ հիշում է խանդավառ
 Քեզ ամեն սիրտ, ամեն լեզու:

Եվ մի՞թե կարելի է սպառել այն թեման, թե ինչպես ժողովուրդը սիրում է Պուշկինին, թե ի՞նչ է ժողովրդի համար նրա պոեզիան մեր օրերում, ի՞նչպես մեծ բանաստեղծը հարազատ դարձավ ժողովրդին:

«Մենք բոլորս մեր մանկության օրից մինչև մեր կյանքի վերջը կախարհված ենք նրա Ապոլոնյան հանճարով,— ասում է Ավ. Իսահակյանը.— նա միշտ մեզ հետ է, միշտ ներկա՝ մեր հոգիներին մեջ:

Երբ մենք մանուկ էինք, նրա ոսկե հեթաթենքերը խցրել-տարել են մեզ կրեակայության Երջանկաբեր աշխարհները:

Երբ պատանի էինք, մեզ հափշտակել է նրա շքնաղ լիրիկան: Մեր երազն ու թախիծը խառնել ենք նրա երազին ու թախծին, և նրա նվիրական ստվերի տակ, թափառել ենք ռուսական մեծ հայրենիքի քնարական դաշտերում, նրա հզոր գետերի ափերին, հառաչող անտառներում աշնան ոսկե տեղաթփի տակ:

Մեր կրիտասարդ տարիներում մեզ թևավորել է նրա ազատաբաղձ ոգին: Նրա խիզախ, մերկաբաշ երգերը մղել են դեպի կռիվ, դեպի զոհաբերում...

Իսկ երբ ծերանում էինք, հակում ենք մեր գլուխը նրա վաղահաս իմաստություն վրա, խորհում ենք մարդկանց և իրերի նրա խորունկ ճանաչողության վրա:

Ժողովրդական մեծ բանաստեղծի ստեղծագործությունը դարձավ իրոք ժողովրդի սեփականություն:

Անասիկի շափերով տճեց Պուշկինի նշանակությունը սովետահայ գրականության համար: Ոչ միայն առանձին բանաստեղծներ և գրողներ, այլև ամբողջ սովետահայ գրականությունը բուռն կերպով ծաղկեց ու աճում է ռուս մեծ գրականության, նրա մեծագույն հանճարների, այդ թվում և Պուշկինի հանճարի ազդեցության տակ: Չկա մի բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, որի ինքնուրույն երկերի կողքին հավասար տեղ չգրավեն նաև ռուս գրականության գործերը, որը խորը կրախտապարտ չլինի ռուս գրականությանը և Պուշկինին՝ իր ստեղծագործության համար:

Բանաստեղծ Ն. Զարյանը գրում է.

«Պուշկինը մեկն է իմ ամենասիրելի բանաստեղծներից, եթե ոչ ամենասիրելին: Ինձ միշտ հիացրել է նրա և նրա պոեզիայի կենսական լավատեսությունը, ժողովրդական իմաստությունը և պարզությունը: Նրա մինչև իսկ ախուր արամագրությունները ոսկեզօծված են ինչ որ զարթոնքի շողերով: Գուցե դա ուս ժողովրդի զգային ինքնագիտակցության արշալույսն է:

Ես սիրում եմ Պուշկինին կարգալ հաճախակի: Նրան թարգմանում եմ մեծագույն հաճությամբ: Թարգմանել եմ «Вольность», «Деревня», «Чаадаеву», «Кинжал», «Анчар». Я памятник себе воздвиг՝ բանաստեղծությունները և «Полтава» պոեմը: Խմբագրել եմ նաև նրա երկերի հայերեն ժողովածուն:

Իմ ստեղծագործության մեջ ես ձգտել եմ մտցնել Պուշկինի պարզությունն ու կայտառությունը: Եթե այդ հատկությունները ես ունեմ, ապա դրանք դալիս են Պուշկինից և Թումանյանից: Պուշկինի հետևությամբ ես սկսեցի գրել դրամատիկական պոեմներ և չափածո դրամատիկական երկեր: Պուշկինը իմ գրական խոշորագույն ուսուցիչն է»:

Բանաստեղծ Սարմենը Պուշկինին անվանում է պոեզիայի անգերազանց վարպետ:

Իսկ անվանի արձակագիր Դ. Դեմիրճյանը գրում է.

«Նրան ընթերցելիս միշտ թվացել է ինձ, թե դա մի շատ հասարակ բան է, որ կարծես կարելի էր, և բանաստեղծը անշուշտ կարող էր, արտահայտել ավելի ձուխ, փայլուն, շքեղորեն, և կարծես ավստսում ես, որ նա այդքան ժլատ է և զուսպ, կասեմ՝ հասարակ: Բայց երբ անցնում էի մի երկու ստրոֆա անգամ մի բանի տող և ահա զգում էի այն հազվագյուտ հաճությամբ, որ հանձարներն դորժերից ես ստանում: Քո առջև կանգնում է մի կենդանի մարդ, որ նայում է քեզ, թափանցում է հոգուդ խորքը:

Պուշկինն ահա այդպես է եղել ինձ համար՝ հասարակ: Հասարակ՝ ինչպես կենդանի մարդը, ինչպես կյանքը: Եվ որովհետև մարդու, կյանքի բնական վիճակը միշտ հասարակ երևույթ է, այդպես էլ Պուշկինի հասարակը նրա հիմնական արտացոլումն է: Նա կյանք է տալիս, նրա ամեն մի տողը ապրում է, շնչում, տխրում, ժպտում, խորհում, զայրանում...

Պուշկինի մեջ չես զգում նրա արվեստը, ավելի ճիշտ՝ արվեստի դժվարությունները, ճիգը, զանազան գեղարվեստական խնդիրներ չեն զբաղեցնում: Ես քո առջև է կանգնում ինչպես մարդ և զուգընթացում ես այդ մարդով միայն — բուն նպատակը ստեղծագործության:

Այս ամենամեծ արժանիքը իր հետ բերում է նաև նրա հետ օրդանապես կապված մի անկեղծություն, բնականություն, հետազոտություն և մտերմություն, որով համակում է Պուշկինը: Նա ընթերցողի ամենասիրած բարեկամն է, ընկերը, կյանքի արեկոծության, պայքարի, տխրության և ուրախության, հայրենասիրության, գեղեցիկ բոլոր բաների այն որոնված խոսքը, որ քեզ պետք է այդ ամենը արտահայտելու համար:

Ո՞րտեղից է սա:

Սա նախ և առաջ այն մեծ դժվարություններից է, որով Պուշկինը սնվել է: Ժողովուրդը հասարակ է, աշխիքն՝ բնական, մեծահոգի, իմաստուն և իր ուժի մեջ խաղաղ ու ժովակալ: Պուշկինը ուս ժողովրդայնությունն է՝ մեծ կուլտուրայի տեր բանաստեղծի հոգում մշակված, բարձրացրած: Այս կուլտուրան և առհասարակ «կուլտուրան», որ շատերին տարել է այլ անհատակա-

նության ուղիներով, մեկուսացրել՝ Պուշկինին մեծապես օգնել է, որովհետև նա շնչել է ժողովրդի առողջ ոգով:

Եվ Պուշկինի վառ հայրենասիրությունը, որ ինձ օրինակ է եղել հայրենասիրության, միշտ կապված է եղել ժողովրդի հասկացողության հետ: Պուշկինը միշտ խոսել է ուսման ժողովրդի հայրենիքի անունից:

Պուշկինը միշտ հաճախել է ինձ ստեղծագործական ձիգերի ժամանակ: Եւ միշտ հիշել եմ նրա հիմնական սկզբունքները՝ բնականություն, անկեղծություն, վեհություն: Իսկ սա իր հետ բերում է մի վսեմ պարզություն: Իսկ ի՞նչ է ողջ Պուշկինը — վսեմ պարզություն:

Այս բոլոր կարծիքների մեջ, որոնց թիվը կարելի էր բազմապատկել, արտահայտված են ոչ միայն առանձին գրողների մտքերն ու զգացմունքները, այլև այն ընդհանուրը, որ հատուկ է ամբողջ սովետական գրականությանը, յուրաքանչյուր սովետական գրողին:

Պուշկինի պոեզիան հայ ժողովրդի համար հանդիսացավ ուսման մեծ ժողովրդի մտքի մեծությունը, հոգու ազնվությունը, հումանիզմը և ազատասիրությունը խորապես ճանաչելու լավագույն միջոցներից մեկը, որ զնալով ավելի ուժեղացնելով նրկու ժողովուրդների բարեկամությունը, միացրել է նրանց սոցիալիզմի երկրի բոլոր ժողովուրդների հետ՝ ժողովուրդների միասնական եղբայրական անսասան ընտանիքում:

Պուշկինյան պոեզիայի արևը մի դարուց ավելի լուսավորել և լուսավորում է հայ գրականության զարգացման ուղին, հանդիսացել է ոգեշնչման աղբյուր և օրինակ հայ գրողների համար: Եվ Պուշկինի հանճարեղ երկերի թարգմանությունները, նրանց համաժողովրդական մասսայականությունը, բանաստեղծին արված քաղամաթիվ ձոները՝ սկսած ուսանալորներից ու մինչև նրա անունով դպրոցներ, դրաղարաններ, կուլտուրեսություններ, շրջաններ և այլն կոչելը, հայ ականավոր գրողների կողմից Պուշկինի պոեզիայի իրենց սեփական ստեղծագործության մեջ ունեցած հսկայական դերի ճանաչումը, — այս բոլորը ցայտուն կերպով ապացուցում է, որ Պուշկինը եղել է, է և առհավետ կմնա ամենասիրած, հարազատ բանաստեղծը և հայ ժողովրդի համար:





[204]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026427

